

ՄԱՐԶԻԿ

հսլս

مارزقك

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

ԻԷ ՏԱՐԻ, 2008, ԹԻԻ 1 (307) VOL. XXVII N° 1

السنة السابعة والعشرون العدد الأول

90 ԱՄՆԵԱԿ



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

ԱՌ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ Հ.Մ.Ը.Մ.Ի ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆ ՈՐ ՅԱԹԵՆՔ, ՅՈՒՆԱՍՏԱՆ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի մայրավանքէն հայրապետական օրհնութեամբ կ'ողջունենք ձեզ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի Յունաստանի սկաուտութեան 85ամեակի ուրախ առիթով:

Տասնամեակներ շարունակ Հ.Մ.Ը.Մ.ը մեր ժողովուրդի կեանքէն ներս իր գործով ու ծառայութեամբ կեդրոնական տեղ գրաւեց դառնալով սիրելի ու յարգելի կազմակերպութիւն մը: Սկաուտութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի կառոյցին մէջ ունեցաւ իր ուրոյն տեղը եւ կարեւոր դերը: Արդարեւ, սկաուտութիւնը ազգային դպրոց մը դարձաւ՝ հոգեմտաւոր արժէքներով թրծելով ու ազգային առողջ դաստիարակութիւն ջանքերով մեր նոր սերունդներուն:

Վստահ ենք որ Յունաստանի մեր սիրելի գաղութէն ներս եւս Հ.Մ.Ը.Մ.ը իր զանազան մասնաճիւղերով ու ենթակառոյցներով եւ մասնաւորաբար իր սկաուտութեամբ կարեւոր ներդրում մը կատարեց մեր ազգային կեանքէն ներս՝ թէ՛ կազմակերպչական ու թէ՛ հայակերտումի իմաստով: Հետեւաբար, երբ կը տօնէք Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի սկաուտութեան 85ամեակը, վստահ ենք որ յիշելով անցեալի իրագործումները,

ըր, պիտի վերանորոգէք Հ.Մ.Ը.Մ.ի նուիրական ձեր ուխտը՝ առաւել խանդավառութեամբ շարունակելու Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնը:

Այս առիթով, մեր բարձր գնահատանքը կը յայտնենք բոլոր անոնց, որոնք հաւատարմօրէն ծառայեցին ու կը շարունակեն ծառայել Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի ընտանիքին:

Կ'աղօթենք առ բարձրեալն Աստուած, որ իր հովանիին ներքեւ Հ.Մ.Ը.Մ.ը միշտ պահէ զօրեղ ու կենսունակ՝ իր առաքելութեան ճամբուն վրայ:



Աղօթարար՝ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐ



Հոգեւոր ուրախութեամբ վերահասու եղանք, թէ կը տօնէք հայ սկաուտութեան 95ամեայ եւ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի սկաուտութեան 85ամեայ պանծալի յոբելեանները:

Սիրելի հայորդիներ, երբ ակնարկ մը նետենք մեր պատմութեան վրայ, պիտի տեսնենք թէ մեր նախնիք զանազան նպատակներով բազմահարիւր միութիւններ եւ ակումբներ կազմած են:

Քսաներորդ դարու սկիզբին, Պոլսոյ երկնակամարին ներքեւ կազմուած է նաեւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը:

Գրեթէ նոյն տարիներուն, մեր մէջ մուտք կը գործէ սկաուտութիւնը: Համայնքային զանազան վարժարաններ, հասկնալով սկաուտութեան դրական ներդրումը հայ պատանիի կազմաւորման մէջ, կը կազմեն իրենց սկաուտութեան խմբակները: Մինչեւ իսկ Պոլիսէն Հ.Մ.Ը.Մ.ի կողմէ երեւան կ'ուղարկուին երեք սկաուտ մարզիչներ:

Այս շարժումը այնքան կը տարածուի, որ քանի մը տարի ետք կը կազմուի նաեւ կին սկաուտներու միութիւն մը:

Արքայանիստ մայրաքաղաքէն շարժումը կը տարածուի նաեւ դէպի միւս քաղաքները, ուր եւս կը կազմուին խմբակներ: Զմիւռնիոյ թեմին մէջ կը հրատարակուի նաեւ սկաուտներու պարբերաթերթը:

Եւ այսօր, Պոլիսէն շատ հեռու, երբ Աթէնքի մէջ կը տօ-

նէք հայ սկաուտութեան 95ամեայ եւ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի սկաուտութեան 85ամեայ զոյգ տարեդարձները, այս պատմական դրուագները գեղեցիկ առիթներ են միանալու, միաբան ըլլալու եւ յարատեւելու դէպի ապագայ:

Կը շնորհաւորենք օրուան պարգեւատրեալներ՝ Յունաստանի ներքին գործոց նախարար տեար Փրոքօփիս Փաւլոփուլոսը, պաշտպանութեան նախարար տեար Էվանկելոս Մէյմարաքիսը:

Իբրեւ առաջին հոգեւոր սպասաւորը Պոլսոյ Ս. Աթոռին, հոգեւոր ուրախութեամբ կը միանանք կրկնակ տարեդարձներու տօնակատարութեան: Հայրական օրհնութեամբ եւ սիրով կը շնորհաւորենք ձեզ այս յիշատակելի կրկնակ առիթներով: Հանգստեան աղօթքով կը յիշենք հայ սկաուտութեան ի Քրիստոս ննջած հիմնադիրները, անդամները, վարչականներն ու բարերարները: Կարողութիւն կը մաղթենք այժմու վարչութեան եւ ձեզի՝ հայ եկեղեցւոյ սիրելի զաւակներուդ: Շարունակեցէք ծառայել առաւել խանդով ու եռանդով: Միշտ ի մտի ունեցէք Յիսուս Քրիստոսի աղօթքին բառերը. «Եւ ես տուի անոնց այն փառքը, զոր դուն տուիր ինձի, որպէսզի մէկ ըլլան, ինչպէս որ մէկ ենք մենք» (Յովհաննէս ԺԳ. 22): Պահեցէք ձեր միութիւնը եւ շարունակեցէք գործել՝ միութեամբ զօրացած: Թող ամենաբարին Աստուած օրհնէ ձեզ եւ ձեր ընտանեկան յարկերը, ընտանիքներն ու բոլորիդ պարգեւէ իր շնորհները առատապէս:

Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԷ ՄԵՄՐՈՊ ԱՐՔ. ՄՈՒԹԱՅԵԱՆ



ԹԻՒՆԻՆ ՆԻՒՆԵՐՈՒ

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 سارزىك مجلة رياضية شهرية تصدرها جمعية الهومنتمن الرياضي



Մարզական ամսաթերթ
 Հրատարակությունը Հ.Մ.Ը.Մ.ի
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ


ԻՒ. ՏԱՐԻ, 2008, ԹԻՒ 1 (307)



4

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Նոր Հրատարակություններ 3
- Դէմքերու շեռ 4
- Ապրումներ 7
- Մեր Տեսակցությունները 9
- Խոստմնալից Հ.Մ.Ը.Մ.ականներ 12
- Պատմութեան Համար 14
- Մասնաճիւղէ Մասնաճիւղ 15
- Մեր Կորուստները 36



9

ԲԱԺԻՆՆԵՐ

- Հայագգի Դէմքեր 11
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40



15

ԽՄԲԱԳԻՐ
 Վիգէն Աւագեան
 ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՍ
 Սեդա Պէշլեան
 Սեւան Նազարեան

«ՄԱՐԶԻԿ»-Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ
 Արօ Մոսիկեան
 Գօգօ Սկրտիչեան
 Վահան Համամճեան
 Տիրան Շահինեան
 Սալբի ճէճէեան
 Վահէ Թանաշեան

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ
 Վ. Աւագեան, Վարուժան Շամլեան,
 Զարեհ Սափսրզեան, Կարայիս
 Գույունճեան, Գառնիկ Սկրտիչեան,
 Սալբի Լատոյեան եւ
 շրջաններու թղթակիցներ:

Էջադրում - Զարեհ Զէօրէքճեան
 Գրաշարութիւն - Վերա Բարսեղեան
 Colour Separation - Photogravure Paklayan
 Կողքի Զեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՅԷ
 Պուրճ Համուտ, Ճինիշեանի Թաղ
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117
 E-mail: marzig@homenetmen.org
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՅՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին
 հատավաճառի սակն է 3000 Լ.ո.:
 Տարեկան բաժանորդագրութեան սակ
 ճշդուած է 35000 Լ.ո.:
 Լիբանանէն դուրս թերթին
 բաժանորդագրութիւնը
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Մեկուսի
 եւ Շրջանային Վարչութիւնները:
 Թերթը ուղղակի Լիբանանէն
 կը ստացուի անձնական
 բաժանորդագրութեամբ
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
 եւ Եւրոպական երկիրներ \$50,
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$55):



Ն Ա Գ Յ Ն

ՊԱՏՆԷՇԻ ՎՐԱՅ

(Հ.Մ.Ը.Մ.Ի 90ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

2 008ին, Հայաստանի եւ Սփիւռքի տարբեր գաղութներուն մէջ, տօնակատարութիւններու շարքով մը կը նշուի Հ.Մ.Ը.Մ.Ի հիմնադրութեան 90ամեակը, ոգելորութեան եւ խանդավառութեան մթնոլորտ մը ստեղծելով ամենուրեք:

Այս տօնակատարութիւններուն առիթով արդար է հպարտութիւնը բոլոր եւ մասնաւորաբար վեթերան Հ.Մ.Ը.Մ.ականներուն, որոնք բարձր ծակատով կը ներկայանան իրենց ժողովուրդին, պարզելու համար իննսուն տարի անընդհատ գործած այս մեծ միութեան նուաճումները, մեր կեանքի դժուարին պայմաններուն մէջ:

Ժողովուրդներու պատմութեան մէջ հազուադիւտ են մարմնակրթական այն միութիւնները, որոնք իննսուն տարի շարունակ ընթացած ըլլան իրենց հիմնական առաջադրանքներուն ուղիով: Մանաւանդ մեր օրերուն, երբ մարզական միութիւնները, քիչ բացառութեամբ, վերածուած են շահակցական մօտեցումով ակումբներու, իսկ սկաուտական շարժումները՝ խորքէ պարպուած ընկերային համախմբումներու:

Հայութեան նման փոքր եւ ցիր ու ցան ժողովուրդի մը համար հրաշքի համազօր բան է իննսուն տարի շարունակ մարմնակրթական միութիւն մը պահել իր ազգային-միութենական սկզբունքներու պատուանդանին վրայ, առանց շեղելու այն հիմնական նպատակակէտէն, որ Հ.Մ.Ը.Մ.ինը եղաւ:

Արդարեւ, Հ.Մ.Ը.Մ. չեղաւ մարզադաշտերու վրայ միայն յաղթանակներ ապահովելու ձգտող կազմակերպութիւն մը: Ո՛չ ալ սկաուտութիւնը սկաուտութեան սիրոյն կիրարկող միութիւն մը: Ան իր գոյութիւնը ամէնէն աւելի խարսխեց մարզական ազնիւ ոգիի վրայ, որուն մէջ համադրուած են մարդկային բոլոր առաքիւնութիւնները:

Մարզական ոգիի զուգընթաց, իբր

հայկական միութիւն, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներուն գլխաւոր նպատակներէն մէկը եղաւ հայ մատղաշ հոգիներու մէջ քանդակել հայու ոգին:

Այդ ոգիին շնորհիւ այս միութիւնը կարողացաւ դիմագրաւել բոլոր տեսակի դժուարութիւններն ու փորձութիւնները, որոնք ցցուեցան իր իննսունամեայ գործունէութեան ծամբուն վրայ: Ան ձգտեցաւ հայ պատանիին ու երիտասարդին մէջ նախ կերտել Մարդը, Հայը եւ ապա՝ մարզիկը կամ սկաուտը:

Մերունդներ զինուորագրուեցան Հ.Մ.Ը.Մ.ի դրօշին եւ հազարաւորներ լծուեցան մարդակերտումի եւ հայակերտումի անոր նուիրական գործին:

Ահա, այս երեւոյթին մէջ պէտք է փնտռել գաղտնիքը Հ.Մ.Ը.Մ.ի հանդէպ մեր ժողովուրդին տածած գուրգուրանքին եւ ցոյց տուած քաջալերանքին:

«Բարձրացիր-բարձրացուր»ը եղաւ անոր նշանաբանը, ու բարձրացաւ ան, բարձրացնելով նաեւ մեր ժողովուրդին վարկը յաշս օտարներուն:

Այսօր, իր հիմնադրութենէն իննսուն տարի ետք, դարձեալ պատնէշի վրայ է Հ.Մ.Ը.Մ.ը, մեծամեծ մարտահրաւերներով, սակայն միշտ եռանդուն ու խանդավառ, միշտ տրամադիր անսահման զոհաբերութիւններու եւ միշտ պատրաստ՝ նոր բարձունքներ նուաճելու:

Կրտսերագոյն մոկլիէն մինչեւ Կեդրոնական Վարչութեան իր անդամները ամէն օր իրենց հոգիէն, մտքէն ու հանգիստէն բան մը կը զոհաբերեն, բարձր բռնելու համար այն դրօշը, որ աւանդ ձգուեցաւ իրենց միութեան անմոռանալի հիմնադիրներուն կողմէ:

Փա՛ռք այդ պանծալի դրօշին:


Պատի՛ւ այդ դրօշը բարձր բռնած եւ միշտ պատնէշի վրայ կանգնած «Հսկայ նուիրման տորմիդ հրաթեւ, կամաւոր բանակ»ին:

Բի՛ւր յարգանք իննսունամեայ այս միութենէն յաւէտ բաժնուած Հ.Մ.Ը.Մ.ականներու պանծալի յիշատակին:



«ՊԱՏՄՈՒԹՒՒՆ ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ»

-Դ. ՀԱՏՈՐ-



Վ. Աւագեան ՊԵՅՐՈՒԹ

Արդէն իսկ հրապարակի վրայ է Բիւզանդ թորիկեանի «Պատմութիւն Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան» հատորներու շարքին չորրորդը, որ կ'ընդգրկէ միութեան նորագոյն շրջանի պատմութիւնը՝ 1991-2006: «Հատորը կը պարփակէ Հ.Ս.Ը.Մ.ի 9 շրջաններու եւ աւելի քան 92 մասնաճիւղերու, առաւել Հ.Ս.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի՝ Հայաստանի մայրաքաղաք Երեւանի եւ 9 մարզերու մասնաճիւղերու կամ սկառուտական, մարզական, ընկերային եւ ազգային գործունէութիւններու ընդհանուր պատկերը: Հատորը կը պարունակէ նաեւ միութեան 4 Ընդհանուր Ժողովներու (Ե., Զ., Է., Ը.) եւ 4 Կեդրոնական Վարչութիւններու գործունէութիւններու պատմութիւնը», կ'ըսէ հեղինակը իր «Յառաջաբան»ին մէջ: Նախորդ երեք հատորները կ'ընդգրկեն միութեան պատմութիւնը սկիզբէն մինչեւ 1939 (Ա. հատոր), 1940-1974 (Բ. հատոր) եւ 1975-1990 (Գ. հատոր):

Ինչպէս նախորդ հատորները, ներկայ չորրորդ հատորը եւս քառամեակի մը տքնաջան ու համբերատար աշխատանքի արդիւնք է: Հեղինակը՝ Բիւզանդ թորիկեան, վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ.ական, 1974էն մինչեւ օրս միութեան բոլոր Պատգամաւորական Ժողովներուն մասնակցած ըլլալով, նաեւ՝ բազմիցս Կեդրոնական Վարչութեան անդամակցած ըլլալով, քաջածանօթ է միութեան ներքին «խոհանոց»ին, շրջաններուն եւ անոնց ապրած վերիվայրումներուն: Իր երկարամեայ փորձառութեան եւ ծանօթութիւններուն կողքին, ան իր տրամադրութեան տակ ունեցած է միութեան բազմաճազար էջերու հասնող հարուստ արխիւները (տեղեկագիրներ, Ընդհանուր Ժողովներու արձանագրութիւններ, շրջաններու ատենադրութիւններ, առանձին հրատարակութիւններ...), որոնց խղճամիտ ուսումնասիրութեամբ ան լոյսին բերած է Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան ամէնէն մեծածաւալ գործունէութեան 16 տարիներու պատմութիւնը: Արդարեւ, Հ.Մ.Ը.Մ. 1991ին կը հաշուէր հազիւ 62 մասնաճիւղ, մինչդեռ 2006ին այդ թիւը գրեթէ 50 առ հարիւրի աճ արձանագրած է եւ միութեան մասնաճիւղերուն թիւը հասած է 92ի եւ մինչեւ... 99ի: Այս մի-

ջոցին, Հայաստան անկախացած է եւ Հ.Մ.Ը.Մ. վերադարձած է իր բնօրրանը:

Համայնավար վարչակարգի տապալումով, միութիւնը վերընձիւղուած է Պուլիարիոյ մէջ: Աւելին, ան նոր արմատներ նետած է եւրոպական տարբեր ուստաններու մէջ՝ Շուէտ, Իտալիա, Հոլանտա, Հունգարիա եւ այլն:

Հատորը կ'անդրադառնայ միութեան բոլոր շրջաններու գործունէութեան: Երկրորդ եւ երրորդ մասերը պերճախօս են այս իմաստով, որովհետեւ 316 էջերով անոնք կը ներկայացնեն 9 Շրջանային Վարչութիւններու եւ 14 Մեկուսի Վարչութիւններու մարզական եւ սկառուտական աշխատանքները, որոնց խտացումը կարելի է կատարել մէկ բառով՝ ՀԱՅԱ-ՊԱՀՊԱՆՈՒՄ: Գամիչիէն մինչեւ Շիքաօ, Մուսուլէն մինչեւ Սիտնի եւ Երեւանէն մինչեւ Ախալքալաք թէ՛ այլուր, ամէն տեղ աշխատանքի նոյն թափն ու ոգին ակներեւ է: Հայ մատուց սերունդը դաստիարակելու եւ ազգին գոյատեւման ապահով երաշխիքները տալու նոյն մտահոգութիւնն է, որ տողատակի կը տեսնուի իւրաքանչիւր էջի մէջ, այդ ըլլայ մարզախաղերու ներկայացում, սկառուտական բանակումի բնութագրում թէ՛ անդամական ժողովի գնահատում:

Անկասկած, հատորին ամէնէն հետաքրքրական բաժինը կը հանդիսանայ չորրորդ մասը, որ նուիրուած է Հայաստանի: Ընթերցողը հոն կը գտնէ չորս ենթաբաժիններ. «Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղեր եւ միաւորներ Հայաստանի մէջ», «Հայաստանի պատասխանատու մարմին», «Հ.Ա.Ս.Կ.ի կազմակերպական եւ սկառուտական գործունէութիւն», «Հ.Ա.Ս.Կ.ի անդամակցութիւնը Համաշխարհային Սկառուտական Շարժումին»: Բիւզանդ թորիկեան արժանահաւատ պատմագիրն է այս հանգրուանին, որովհետեւ ան ապրած է դէպքերուն եւ դէմքերուն հետ, մօտէն հետեւած է Հ.Մ.Ը.Մ.ի Հայաստան վերադարձին եւ յաճախ իր մասնակցութիւնը բերած է երազը իրականութիւն դարձնելու միութեանական յանձնառութեան:

Յատուկ ուշադրութեամբ կ'արժէ կանգ առնել նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի համահայկական կառոյցը գլխաւորող Կեդրոնական Վարչութիւններու յատկացում բաժնին վրայ (Ա. մաս):

Իրերայաջորդ յաջողութիւններու եւ նուաճումներու հոր-վոյթ մը կը ներկայացուի այստեղ, համա-Հ.Մ.Ը.Մ.ական բազմաթիւ նախաձեռնութիւններով:

Այս բաժնին մէջ, առաջին անգամ ըլլալով, կը հրապարակ-ւին միութեան Արժանեաց եւ Արտակարգ շքանշաններուն արժանացած Հ.Մ.Ը.Մ.ականներուն անունները, 1978էն մին-չեւ օրս:

Տակաւին, պէտք չէ մոռնալ կարեւորութիւնը հատորին հինգերորդ մասին, որ ամբողջութեամբ նուիրուած է միու-թեանական մամուլին՝ կանոնագրութիւններ, հրատարակու-թիւններ, պաշտօնաթերթեր եւ քարոզչական-լսատեսողական ենթագլուխներով:

Բիւզանդ Թորիկեան Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան մեծ երախ-տաւորն է: Ան առանձինն կ'իրագործէ հաւաքական աշխա-տանքի կարօտ վիթխարի գործ մը, առանց անտեսելու գործին կապուած նուազագոյն մանրամասնութիւնը: Այսպէս, ան հատորը կը ճոխացնէ հարիւրաւոր նկարներով, վարչական կազմերը կը նշէ ամենայն մանրամասնութեամբ, ռեւէ մէկը չմոռնալով կամ չանտեսելով մօտեցումով: Միութեան ամբող-ջական պատմութիւնը ներկայացնելու իր ճիգին մէջ, Թորիկ-եան կը դիմէ շատերու՝ տեղեկութիւն մը աւելի ունենալու կամ անստոյգ բան մը ստուգելու համար: Ի գուր չէ, որ հա-տորին սկիզբը ան շնորհակալութեան խօսք կ'ուղղէ Աթէն-քէն, Լոս Անճելըսէն, Մոնթրէպլէն, Գորտոպայէն, Գահիրէէն եւ Ճիւնիէն 6 քոյր-եղբայրներու:

Այս հատորը, ինչպէս նախորդները, արդի ժամանակնե-րու մեր կեանքը հարազատօրէն ներկայացնող կարեւոր գործ մըն է, որուն մէջ Հ.Մ.Ը.Մ.ական մարդը կը գտնէ իրեն հպար-տութիւն առթող շատ բան, իսկ հայ մարդը առհասարակ զայն կարգալով կրնայ միայն հիանալ եւ խոնարհիլ վաստա-կին առջեւ այն մեծ միութեան, որ գիտէ 90ամեայ նման պատ-մութիւն կերտել եւ այդ պատմութիւնը հատորներու վերա-ծող Բիւզանդ Թորիկեաններու նման միութեանականներ ու-նենալ:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ եղբ. տոքթ. Միսաք Արզումանեանի մահուան առիթով՝ Հ.Մ.-Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կատարուած են հետեւեալ նուիրատուութիւնները.-

- Սիրուհի Պուլղուրճեան \$ 300
- Տէր եւ տիկին տոքթ. Գրիգոր եւ Գիւլի Պարսումեան \$ 250
- Տէր եւ տիկին Յարութ Պուլղուրճեան \$ 200
- Տիկին Սօսի Պետրոսեան \$ 100
- Տէր եւ տիկ. Սթի Արթինեան \$ 100
- Տէր եւ տիկ. Չաւեն Սողոյեան \$ 50
- Տիկին Անահիտ Կիրակոսեան \$ 50

«Սարգիկ»ի թիւ 301-302ի ցանկին մէջ, նոյն առիթով կատարուած նուիրատուութիւններու շարքին, տեղ գտած են երկու վրիպումներ:

Տէր եւ տիկին Կարօ Սեդրակեան եւ օրդ. Էմմա Մելքոնեան նոյն նպատակին կը նուիրեն 75ական ամ. տոյլար:

**Վարուժան Շամլեան
ՄՈՆԹՐԷԱԼ**

1 974ին, երբ առաջին անգամ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անգամ ընտրուեցայ, կազմէն կը ճանչնայի միայն եղբ. Միհրան Շիմշիր-եանը, որ սկառուտական Շրջանային Խմբապետի պաշտօնին բերումով օգտակար եղած էր աշխատանքիս՝ Ան-թիլիասի սկառուտական շարքերը օժտելու կարող խմբապետ-ներով, արագընթաց պատրաստութեամբ մը:

Այդ թուականներուն, մասնաճիւղերու վարչութիւններու ընտրութեան ժամանակ մասնաճիւղի սկառուտ խմբապետը ի պաշտօնէ մաս կը կազմէր վարչութեան:

Նկատի ունենալով որ սկառուտութիւնը հիմնական մէկ օղակն էր մեր միութեան՝ պատրաստելու տիպար հայ քաղա-քացին եւ ղեկավարը, օգտակար կը գտնէինք նոյն դրութիւնը կիրակել Շրջանային Վարչութեան մօտ, աւելի զարկ տալու համար այդ ճիւղին եւ Շրջանային Խմբապետին միջոցով իրագել դառնալու համար գործին ընթացքին եւ կարիքնե-րուն:

Այդ պատճառով, եւ որովհետեւ կանոնագրութիւնը թոյլ չէր տար, որոշ աշխատանքով եղբ. Շիմշիրեանը ընտրուեցաւ Շրջանային Վարչութեան անգամ:

Նոր կազմին ատենապետն էր եղբ. տոքթ. Միսաք Արզու-մանեանը:

Իր խստաբարոյ երեւոյթը, սակաւախօսութիւնը եւ անբա-ժան ծխամորճը այնքան ալ հաճելի չէին ինձի:

Եթէ չեմ սխալիր, մեր երրորդ նիստին ատենագրութեան ընթերցումէն անմիջապէս ետք, եղբ. Արզումանեան հարց տուաւ եղբայր Միհրանին՝ ո՞վ կը նշանակէ Շրջանային Սկառուտ. Խմբապետը:

Եղբօր պատասխանը եղաւ Շրջանային Վարչութիւնը:

- Ուրեմն, այս վայրկեանէն սկսեալ դուք կը դադրիք այդ պաշտօնէն եւ կը մնաք միայն Շրջանային Վարչութեան ան-դամ:

Անհաճոյ եւ յուսալքող անակնկալ էր ինձի համար:

Կարգ մը այլ նշանակումներ, դարձեալ առանց վարչա-կաններու հետ խորհրդակցութեան, աւելի գէշ տրամադրե-ցին զիս իրեն հանդէպ:

Յաջորդող ամիսներուն կլանուած էի Մերձաւոր Արեւելքի նախորդ Շրջանային Վարչութիւններու ատենագրութիւննե-րուն ընթերցումով եւ ինձի վստահուած պարտականութիւն-ներով:

Ժողովները, որոնք այդ շրջանին տեղի կ'ունենային Պէյ-րուտի մասնաճիւղի ակումբին մէջ, կ'անցնէին հեզասահ, բայց որեւէ «խմորում» չէի զգար միւս անդամներուն հետ:

Եղբ. ատենապետը օրակարգի ամէն մէկ նիւթին պարագային կարգով կ'ուզէր իւրաքանչիւրին կարծիքը եւ ընդհանրապէս կ'եզրակացնէր մեծամասնութեան կարծիքը: Հագուազիւտ էր որ լսէինք իր անձնական կարծիքը:

Սկզբնական շրջանի իմ գէշ տպաւորութիւնս իրեն հան-դէպ անզգալաբար չքացաւ, բայց կը մնայի վերապահ:



ԱՏԵՆԱՊԵՏՍ

(ԵՂԲ. ՄԻՍԱԲ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ)

1976ի Լիբանանի քաղաքական կացութեան անապահով վիճակը պատճառ դարձաւ որ մեր ժողովները կատարուին Պէյրութի արեւելեան շրջանին մէջ, քիչ մը թափառական՝ Պուրճ Համուտի քաղաքապետութեան եղբ. Արզումանեանի գրասենեակը, Անթիլիասի եւ Պուրճ Համուտի ակումբները, Ազգ. Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Գոլէճի տնօրէնութեան գրասենեակը, ըստ կարելիութեանց:

Չեմ գիտեր թէ ի՞նչպէս եղաւ հոլովոյթը, բայց եղբայրներ Արզումանեան եւ Կարօ Պետրոսեան առջեւ կը քշէին զիս:

Երկար տարիներ ետք էր միայն, որ օր մը եղբ. Արզումանեան անդրադառնալով մեր առաջին շրջանին ըսաւ. «Դուն ալ սկիզբը լաւ չէիր տրամադրուած ինձի հանդէպ, բայց տեսար որ որեւէ հարց կամ նախատրամադրութիւն չունէիր»...:

Մեր անձնական գործի վայրերուն մօտիկութիւնը առիթ տուաւ աւելի յաճախ տեսնուելու եւ զիրար ճանչնալու:

Ու կամաց-կամաց սկսայ ճանչնալ անձը:

Եղբ. Արզումանեան մեծ յարգանք ունէր մասնաւորաբար անցեալ ունեցող եղբայրներու հանդէպ՝ Յովհաննէս Շահինեան, Նշան Թիւյսիւզեան, Յարութիւն Գազանձեան (Գեղարդ): Հաճոյքով կը խօսէր նախկին Փոլիսպոլիստներու մասին:

Պուրճ Համուտի քաղաքապետութեան կեդրոնական դիրքը պատճառ էր որ բոլոր մասնաճիւղերու եղբայրները դիւրութեամբ այցելէին իրեն: Իր այցելուներէն ան տեղեակ կ'ըլլար միութենական այլազան հարցերուն եւ ըսի-ըսաւներուն:

Յստակ էր որ ժողովներէն առաջ մանրամասն տեղեակ էր բոլոր իրադարձութիւններէն, որոնք սակայն կը պահէր իրեն:

Կարգով, ժողովականները կը զեկուցէին իրենց վստահած պարտականութիւններուն եւ յանձնարմբային աշխատանքներուն մասին:

Յօնքերու թեթեւ կիտումէ մը կը զգայի որ իր տեղեկութիւնները տարբեր էին: Համբերութեամբ, չըսելու համար կրաւորական կերպով մտիկ կ'ընէր իւրաքանչիւրը եւ երբեմն երկա՛ր զեկուցումները:

Դիտելով զինք՝ նկատած էի, որ փոքր թմբակահարում մը սեղանին, ձեռքի ծխամորձի ցպիկով կամ աթոռին վրայ, աջ-ձախ շարժումներով, նշան էին ժողովի երկարութեան:

Աջի՛ն՝ եղբ. Միսաբ Արզումանեան:



Յստակ գիտէր ատենապետի մը պարտականութիւնները, պարտաւորութիւնները եւ իրաւասութիւնները:

Խղճմտօրէն կը կատարէր առաջին երկուքը: Թոյլ չէր տար ինքզինքին որեւէ տեսակի թերացում: Պատգամաւորական ժողովի մը ճաշի դադարին շատ պնդեցի որ բաժակ մը գինի խմէ. մերժեց: Կրկնակի պնդումներուս վրայ ականջիս փսփսաց. «Բիշ յետոյ իմ կարգս է ժողովը վարելու, չեմ ուզեր որեւէ թուլացում ունենայ»:

Շատ չէր ծանրանար պարտականութեան թերացումի պարագային, միշտ առիթ տալով ամբողջացումին կամ սրբագրութեան, բայց երբ թերացումը կը վնասէր միութեան, իր քովը կը կանչէր ենթական՝ առանձին, կը լսէր անոր զեկուցումը, կը հարցաքննէր իր ունեցած տեղեկութիւններուն հիմամբ եւ ի հարկին չէր ինայեր ենթակային տալ բերանացի սաստը:

Միեւնոյն ձեւով չէր դատեր թերացումները, կ'ըսէր՝ «Հինգ մատնեղ նոյնը չեն», «Տկար զաւակը չես պատժեր առողջին պէս»:

Ներողամիտ վարմունք ունէր կատակներուս կամ «չարութիւններուս» նկատմամբ: Ժողովի ընթացքին, որ կը պահէր իր կարգին մէջ, թոյլ չէր տար ոտնակոխել ատենապետի իր պաշտօնը: Ժողովի մը ընթացքին, երբ կարգս էր արտայայտուելու, սկսայ ըսելով՝ «Եթէ համադրենք տրուած կարծիքները...», անմիջապէս կասեցուց զիս ըսելով՝ «Համադրելը իմ

գործս է, դուռն քո՛ւ կարծիքդ տուր»:

Ատենապետի տիպարն էր՝ համբերատար, ներողամիտ, իւրաքանչիւրին տարով լայն ժամանակ արտայայտուելու, կանխելով վէճի կարելիութիւնները, հակադարձութիւնները կամ հանդարտեցրնելով պոռթկումները:

Սկզբնական շրջանին գիտանահանգստացնող իր մասնակի որոշումները, ատենապետի իր իրաւասութեան սահմաններուն մէջ, հետագային չտեսայ որեւէ ատեն:

Շատ չէր սիրեր երեւիլը, որուն համար ալ յաճախ կը քննադատուէր: Չէր ուզեր միջամուխ ըլլալ մասնաճիւղային հարցերու, մասնաւորաբար վարչական կազմերու անհամաձայնութիւններու ընթացքին: Անհրաժեշտ պարագաներու ներկայ կ'ըլլայինք իրենց վարչական ժողովներուն: Մասնաճիւղերու եղբայրներու շատ անգամ անտեղի վերագրումներուն եւ միութենական կեցուածքին հակազդելու տրամադրութիւնն յստակ կը զգար եւ կամաց մը կը բռնէր թեւս կողմնակի պզտիկ նայուածքով մը: Ապա, պարզ խօսակցութեան ձեւով մեծ եղբօր «խրատական»ը կու տար ինծի առանձին, առանց որեւէ մատնանշումի:

Մեծ հանդիսութիւններու ընթացքին, իւրայատուկ առողջանութեամբ իր ճառախօսութիւնները (որոնց մասին լայնօրէն գրուեցաւ «Մարզիկ»ին մէջ) կը պատրաստէր գրաւոր եւ կը պահէր խնամքով:

Տարբեր էր պարագան երբ խօսք կ'առնէր մասնաճիւղերու տարեկան անդամական ժողովներու աւարտին:

Մտիկ ըրած կ'ըլլար տեղեկագրութիւնը եւ ընդգծելու համար մասնաւոր իրագործում մը կը սկսէր չես գիտեր ուրկէ «գտած» չինական կամ հնդկական առածով մը՝ վեր առնելով այդ աշխատանքը:

Պատահեցաւ որ միութենական մը քիչ մը շատ միապետական խիստ ոճով կը վարէր իր այլազան պարտականութիւնները, ընդհանուր դժգոհութիւնն յառաջացնելով իր գործակիցներուն մօտ: Շրջանային վարչութիւնը քննելէ ետք հարցը ստիպուած միջամտեց՝ պահելու համար ներդաշնակութիւնը: Հաւանաբար ենթական հրաւիրուեցաւ եղբ. ատենապետին կողմէ, բայց տեղեակ չեղանք մանրամասնութեանէն:

Քանի մը օր վերջ, եղբ. ատենապետը այցելեց ինծի, նստաւ եւ սպասեց որ առանձին մնանք: Դէմքի արտայայտութիւնը կորսնցուցած էր իր հանդարտ, անմեկնելի երեւոյթը: Թուղթ մը երկարեց, ըսաւ կարդա՛ եւ սկսաւ դիտել դուրսը:



1998. եղբ. Արզումանեան Երեւանի Օլիմպիայի սրահին մէջ կը բանախօսէ Հ.Մ.Ը.Մ.ի 80ամեակի հանդիսութեան առիթով:

Անընդունելի ոճով, քննադատական, չըսելու համար յանդիմանական նամակ մըն էր իրեն, ենթակային կողմէ:

Հարց տուաւ առանց ինծի նայելու (արդեօք չէ՞ր ուզեր որ ապրած տագնապը տեսնեմ դէմքին վրայ). «Ի՞նչ է կարծիքդ՝ կանչե՞նք, դատե՞նք եւ լաւ պատիժ մը տնօրինե՞նք»:

Նամակը անձնական նամակ մըն էր, բայց միութենական գործին վերաբերեալ: Մինչեւ այսօր չեմ գիտեր եթէ ուրիշներ տեղեակ եղան այդ նամակէն:

Կարծիքս պարզ էր. անհատի մը անտեղի եւ աններելի կարծիքն էր միութենական ըմբռնողութեամբ վարչութեան կողմէ տրուած որոշումի մը, որ բնականաբար պիտի գործադրուէր ատենապետին կողմէ: Նուաստացուցիչ կը գտնէի ատենապետին

վարկը նժարի մէջ դնել դառնացած անդամի մը հետ:

Քիչ մը հարցական նայեցաւ ինծի, առաւ նամակը, ոտքի ելաւ՝ «լա՛ւ, մտածեմ, ըսաւ» եւ գնաց:

Այդ մասին խօսք չըրաւ ակելի վերջ, ես ալ չհարցուցի փափկանկատութեամբ: Հարցը փակուած էր:

Այդ դէպքը ա՛լ ակելի մեծցուց գինքը աչքիս: Մէկ կողմ ձգել արժանապատուութեան վիրաւորանքը եւ միութիւնը գերադասել անձէն:

Եղբայր ատենապետ, յուզումով կը յիշեմ, որ երբ ես ազատ էր Հ.Մ.Ը.Մ.ի վարչական աշխատանքներէն եւ դուռն կեդրոնական վարչութեան ատենապետ էիր, ինծի վստահեցար քեզի անհրաժեշտ կարգ մը գործեր: Միութենական գծով սիրտդ բացիր: Տեղեակ եղայ քու ակնկալութիւններուդ եւ յուսախաբուութիւններուդ, քեզի տրուած եւ չյարգուած խոստումներէն:

Շատ դժուար պիտի ըլլայ մոռնալ քեզ, իբրեւ միութենական, ազգային, անհանդուրժողը բարոյական սխալներու, Հ.Մ.Ը.Մ.ը ամէնուրեք բարձր պահող, բայց մանաւանդ՝ իբրեւ օրինակելի ատենապետ:

«ՄԱՐԶԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

- Վարուժան Շամլեան \$ 500
- Գարմէն Տէր Կարապետեան \$ 100
- Գեղամ Սիսեռեանի մահուան քառասունքին առիթով՝
- Կարօ Գազանճեան \$ 100



«ՀԱՅՐ ՄԵՐ»Ը ԴՈՒՆ ԳԻՏԵՄ, ՕՂՎՈՒՄ ԱՆԴՐԱՆԻԿ

Չարեհ Սափարգեան ՄՈՆԹՐԵԱԼ



Միայն առաջին երկու բառերը կը յիշեմ, որովհետեւ մտքէս միշտ կը կննած եմ զանոնք: «Հայր մեր» կը կոչուի: «Հայր մեր»ը դուն գիտե՞ս, օղլում Անդրանիկ, «Հայր մեր» աղօթքը: Եթէ գիտես, բառերը կը կննէ, որ պէսզի միասին աղօթենք, եւ եթէ կըրնաս գրի առնել, ես ամէն օր նորէն «Հայր մեր»ը կ'աղօթեմ: Մեռնելէս առաջ փափաքս այս է, կեանքիս վերջաւորութեան «Հայր մեր» աղօթելով անցընեմ օրերս:

Այս վերջին նախադասութեան, Զէյնէպ հանրմ գրեթէ կը հեծկլտար: Ծանր մթնոլորտ մը կը տիրէր սենեակին մէջ: Հագուադէպօրէն լուրջ էր նոյնիսկ Ուաէլ:

Անդրանիկ լուռ կը դիտէր Յասմիկ-Զէյնէպը՝ փորձելով թափանցել անոր հոգևոյն խորերը: Հայէպ շատ լսած էր, թէ տասնեակ հազարաւոր հայ աղջիկներ, ջարդի ժամանակ, ուղեկով կամ բռնի, ամուսնացած էին թուրքերու հետ, բայց այդ պատմութիւնները շատ հին առասպելներու կամ հեքիաթներու համը կու տային: Հին պատմութիւններով իրենց կեանքը գունաւորող, ծերացած սերունդի մը մոռցուած ու հեռաւոր տեղ մը կորուսած մնացորդացը: Մինչդեռ դիմացը նստող սա կինը կենդանի ապացոյցն է, միտով-ոսկորով ապացոյցը, որ թէեւ մոռցուած՝ բայց երբեք չեն կորսուած, եւ որոնք կ'ուզեն իրենց կեանքին մնացած մասին կրկին իրենց հաւատքին արմատներուն փարիլ:

Անդրանիկ չորցած, բայց հաստատ ձայնով սկսաւ, իսկ Յասմիկ դողացող ձայնով իր ետեւէն կրկնեց:

**Հայր մեր, որ յերկինս ես,
Սուրբ եղիցի անուն թո,
Եկեսցէ արքայութիւն թո...**

Յասմիկին փափաքին եւ պնդումներուն վրայ երեք անգամ կրկնեցին աղօթքը: Ապա թարգմանիչին հետ միասին, լատինատառ թրքերէնով գրի առին: Յասմիկ նոր անձ մը դարձած էր, նոր աւիւնով ուժ առած եւ ինքնագիտակից կարծես իրմէ առնուած արիւնը իրեն կրկին ներարկած էին:

Անդրանիկ յիշեց Աւետարանը, զոր պայուսակը շտկած

ատեն իր մայրը պնդած ու ճամպրուկին մէջ տեղաւորած էր՝ ըսելով.
- Երկար ճամբորդութիւն է, հեռու թող ըլլայ: Ինչ կ'ըլլայ, ինչ չ'ըլլար:
Այո, ինչ կ'ըլլայ, ինչ չ'ըլլար: Եւ Անգարայի մօտերը գիւղապետ թուրքի մը հայ մայրը կ'ըլլայ, որ իր եւ նախնիներուն աղօթքն ու հաւատքը կրկին կ'ուզէ:
Ելաւ ու պայուսակէն Աւետարանը առնելով՝ Յասմիկին տուաւ ու մատնանը

շելով զայն՝ ըսաւ.
- Աւետարան, Սուրբ Գիրք:
- Սուրբ Գիրք, Սուրբ Գիրք, - կրկնեց թրքացած հայ մայրիկը ու մեքենաբար սկսաւ համբուրել եւ ճակատը տանիլ, համբուրել ու ճակատը տանիլ Աւետարանը: Յետոյ զայն անցուց իր Ռեզա տղուն, որ պահ մը տատամսելէ ետք, հանդիսաւորապէս եւ երկիւղածութեամբ, ինք ալ համբուրեց եւ ճակատը տարաւ:

Մթնոլորտը փոխելու համար Ռեզա պէյ ըսաւ մօրը, թէ Անդրանիկ նաեւ Փուլթալի աստղ մըն է եւ շնորհիւ իր կողերուն՝ սուրիական խումբը պարտութեան մատնած էր Անգարայի իրենց հաւաքականը:

Մոռցուած հայու հպարտութիւն մը արթնացաւ Զէյնէպ հանրմի հոլթեան մէջ: Ինք, որ տարագրութեան անմիջապէս ետք կը կարծէր, թէ հայութիւնը այլեւս աշխարհէն ջնջուած է եւ միայն իրեն պէս քանի մը նմոյշներ մնացած են, սխալած էր: Ոչ թէ անոնք յարատեւեցին, գոյութեան դժուար պայքարէ մը ետք իրենց ներկայութիւնը ապացուցեցին, այլ ահա անոնց յաջորդ սերունդին ներկայացուցիչներէն մէկը թրքական մայրաքաղաքին մէջ պարտութեան կը մատնէ թրքական խումբը:

Թաց աչքերով ու նոր յայտնաբերուած հպարտութեամբ մը ըսաւ.

- Էֆէրիմ, օղլում Անդրանիկ, Էֆէրիմ: Եկուր եւ հայու այդ հպարտ ճակատը համբուրեմ:

Յետոյ քիչ մը հարցուց հայութեան մասին, մանաւանդ Սուրիոյ հայութեան վիճակին եւ թիւին մասին տեղեկութիւններ ուզեց, եւ թէ հայերն ու արաբները իրարու հետ հաշտ ու հանգիստ կ'ապրէի՞ն: Անդրանիկ, յիշելէ ետք Սուրիոյ եւ արաբական աշխարհին մէջ հայութեան դիրքն ու վարկը, ժպտելով ցոյց տուաւ Ուաէլը՝ իբրեւ վկայ, որ այդ պահուն

աչքերը գետին յառած՝ հաստատական գլուխը կը շարժէր:

Հասցէներ փոխանակելէ եւ Անդրանիկը իրենց գիւղը հրաւիրելէ եւ վերջին անգամ մըն ալ Յասմիրկ-Ջէյնէպ անոր ճակատը համբուրելէ ետք, անոնք դացին:

Այդ գիշեր, երբ անկողին մտաւ Անդրանիկ, սիրտը հրճուանքով լեցուն էր: Իր նշանակած երեք կողերն էին պատճառը, թէ Յասմիրկին «Հայր մեր»ը, ինք ալ չէր գիտեր:

Այդ Նոր Տարուան երեք օր կար, երբ Անդրանիկ երեկոյեան Հ.Մ.Ը.Մ.ի ակումբէն տուն եկաւ ու սոված ըլլալով՝ ուղղուեցաւ շիտակ խոհանոց, երբ քոյրը՝ Վերժինը, հիւրասենեակէն կանչեց, թէ գինք սպասող հիւր մը ունի: Երբ հիւրասենեակ մտաւ, թարգմանիչն էր, որ իրեն կը սպասէր, հետը բերած երկու մեծ տոպրակներ, պիստակեղէններով եւ չորցուած միրգերով լեցուն՝ նուէր Ռեգա պէյն կողմէ: Կար նաեւ նամակ մը: Անդրանիկ բացաւ նամակը, բայց թրքերէն ըլլալով, թարգմանիչն էր, որ կարդաց եւ բացատրեց:

Նամակին մէջ, Ռեգա պէյ շնորհակալութիւն յայտնելէ ետք այդ գիշերուան հանդիպումին եւ իր մօր յանձնած Ս. Գիրքին, նաեւ մօր ջերմ բարեւներն ու կրկին իրենց գիւղը այցելելու հրաւերը փոխանցելէ ետք, այսպէս կը վերջացնէր.

- Մայրս քու տուած Ս. Գիրքը իր բարձին տակ կը պահէ եւ այդպէս կը քնանայ: Կ'ըսէ, թէ շնորհիւ անոր՝ տարօրինակ եռանդով ու կորովով լեցուած է եւ ամէն առտու ալ, ներքին


անբացատրելի գոհունակութեամբ մը կ'արթննայ: Կը յանձնարարէ, որ ես ալ հատ մը ունենամ: Ուրեմն ինձի ալ կընա՞ս Ս. Գիրք մը գտնել ձեր այդ Հալէպէն, եւ եթէ կարելի է՝ հայ ընտանիքի մը կողմէ գործածուած Ս. Գիրք մը: Մայրս կ'ըսէ, թէ այդ ձեւով աւելի օրհնուած կ'ըլլայ: Գինին մասին երբեք մի՛ մտածեր, որքան ալ սուղ արժէ, Ֆուլատ, իմ թարգմանիչս եւ գործակատարս կը վճարէ:

Անդրանիկին եւ Վերժինին աչքերը իրարու հանդիպեցան եւ Վերժին լաւ հասկցաւ Անդրանիկին միտքը: Գնաց իր սենեակը եւ իր անձնական Աւետարանը բերելով՝ յանձնեց Ֆուլատին: Երբ թարգմանիչը ուզեց գումար մը վճարել, Անդրանիկ ըսաւ.

- Այս մէկը մեր կողմէն Ռեգա պէյը թող Նոր Տարուան նուէր ընդունի: Իրեն փոխանցէ ջերմ բարեւներս, նաեւ համբուրէ Ջէյնէպ հանրմը իմ կողմէս:

Երբ թարգմանիչ Ֆուլատ հեռացաւ՝ ըսելով, թէ վաղը առտու կանուխ իսկ ճամբայ պիտի ելլէ դէպի Անգարա, Անդրանիկ ինկաւ հիւրասենեակի բազկաթոռին վրայ՝ մտածելով: Ի՞նչն էր, որ կը մղէր Ռեգա պէյը այս արարքին. մօրը հանդէպ երկիւղածութեան հասնող սէ՞րը, թէ արեան կանչը: Վստահ չէր: Բայց մէկ բանի վստահ էր, այդ Նոր Տարուան գիշերը Ռեգա պէյ պիտի քնանար հայերէն Ս. Գիրք մը բարձին տակ:

(Շար. 2 եւ վերջ)



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



*Feel at home,
away from home...*

Yerevan
32-38, Hanrabedoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europelhotel.am

www.europelhotel.am


Reservations

Studio/ARCA 2005, ARCA



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՆԴԱՄՆԵՐԸ ՏԷՐ ՈՒ ՊԱՇՏՊԱՆ ԵՂԱՆ ԳԱՂՈՒԹԻՆ

«ՄԱՐԶԻԿ»ԻՆ Կ'ԸՍԷ Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՂՏԱՏԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ՎԱՀԷ ՄԻՀՐԱՆԵԱՆ



Պաղտատի կացութիւնը ծանօթ է բոլորին: Ի՞նչ կրնաք ըսել Պաղտատի հայութեան վիճակին մասին, տրուած ըլլալով որ շատ կցկտուր եւ պատահական լուրեր կը հասնին արտասահման:

-Պաղտատի հայութիւնը դժուարին օրեր կ'անցընէ, սակայն փառք Տիրոջ որ մեր ակումբը իր դռները միշտ բաց կը պահէ: Հ.Մ.Ը.Մ. իր գործունէութիւնը կը շարունակէ: ԸՍ-կառուտական հաւաքները տեղի կ'ունենան Հինգշաբթի օրերը: Մարզիկները մնայուն ներկայութիւն են ակումբէն ներս: Ընտանիքները պարբերաբար կը հանդիպին, սակայն նախկինին նման ձեռնարկներ տեղի չեն ունենար:

Գաղութին թիւը մեծ չափերով նուազած է: Շատեր մեկնած են դէպի հիւսիս, քրտական շրջան, Արպիլ: Հաւրէզի շրջանը, օրինակ, 100 հայ ընտանիք կայ ներկայիս: Շատեր ներգաղթած են Հայաստան, ուրիշներ անցած են Սուրիա: Գաղութը տարտղնուած է, ուժերը ցիր ու ցան եղած են: Կը մնան եկեղեցին, Ազգային Վարչութիւնը, Երիտասարդացը, Հ.Մ.Ը.Մ.ը եւ անոնց շուրջ բոլորուած ազգայիները:

Վստահ, Զ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի մասնաճիւղին թիւն ալ վերիվայրումներու ենթարկուած է:

-Այո՛, անդամներու ճիշդ թիւ տալ դժուար է, որովհետեւ շատեր կը մեկնին՝ խոստանալով որ պիտի վերադառնան, սակայն չեն վերադառնար: Մօտաւոր թիւեր եթէ պիտի տանք՝ սկաուտութեան թիւը 110ի շուրջ է, մար-



զիկներունը՝ 140ի, իսկ անդամներունը՝ 175ի, այլ խօսքով մասնաճիւղին ընդհանուր թիւը 425ի շուրջ է: Մասնաճիւղը ունի 9 հոգինոց վարչութիւն: Թիւի կողքին, գլխաւոր մտահոգութիւնը նիւթական է, քանի ակումբ յաճախողներուն թիւը նուազած է, նախկինին նման մարզախաղեր տեղի չեն ունենար, մուտք չըլլար: Բայց եւ այնպէս, ձեւերը կը գտնենք մենք մեզ պահելու համար: Օրինակ, մենք յաջողեցանք մեր մարզասրահը մասամբ մը նորոգել: Ռուբի մը պայթումէն շէնքը ծանրօրէն վնասուեցաւ, գտանք ընկերութիւն մը, որ ստանձնեց անոր վերանորոգութեան մէկ բաժինը, բայց տակաւին նիւթականի պէտք ունինք աշխատանքները իրենց լրումին հասցնելու համար:

Ի՞նչ վիճակ կը պարզէ սկաուտութիւնը:

-Սկաուտութիւնը իր շաբաթական հաւաքները կը կատարէ: Պարբերաբար կը կատարէ նաեւ բանակումներ, կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութիւններուն եւ կարեւորութեան սահմաններուն մէջ մասնաճիւղը աշխոյժ կը պահէ: Մասնաճիւղին ըսկաուտները մասնակցեցան համա-Հ.Մ.Ը.Մ.ական ծրագրային, Բիւրական, Հայաստան: Վերադարձին, տեղի ունեցաւ եռօրեայ բանակում մը, որուն մասնակցեցան 75 բանակողներ (գայլիկ-արծուիկ, արի-արեւոյշ,

երէց-պարմանուհի): Սկսածները մասնակցեցան նաեւ Ապրիլ 24ի ոգեկոչման հանդիսութեան, Պաղատաւի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

Մարզական կեանքին մասին ի՞նչ կարելի է ըսել:

-Մարզական կեանքը բաւական լաւ է, թէեւ հոս եւս նահանջ կայ՝ անցեալին բաղդատած: Այսօր Իրաքի ազգային հաւաքականներուն մաս կը կազմեն 19 Հ.Մ.Ը.Մ.ականներ: «Մարզիկ»ի անցնող թիւով տուած էիք լուրը, որ Իրաքի թեւիսի աղջկանց ախոյեանը քոյր Մարալ Մինասեանն է: Մասնաճիւղին սուսերամարտի աղջկանց խումբը տիրացաւ Իրաքի առաջնութեան տիտղոսին: Քոնկ ֆուլի արաբական ակումբներու մրցաշարքին, մեր խումբը հանդիսացաւ երրորդ: Պասքեթպոլի պատանեկան եւ երիտասարդական դասակարգերու մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ.ի տղաքը շահեցան Պաղատաւի առաջնութիւնը եւ իրաւունք ստացան մասնակցելու ընդհանուր Իրաքի մակարդակի ախոյեանութիւններուն: Պոլիսիկի պարագային, Իրաքի առաջինը եւ չորրորդը Հ.Մ.Ը.Մ.ական եղբայրներ են: Քոնկ ֆուլի մէջ, երկրին լաւագոյն երեքը մեր անդամներն են: Յայտնեմ նաեւ, որ պատմութիւնի մեր խումբը եւս իր մասին խօսիլ տուաւ, երբ Ֆետերասիոնի կազմակերպած մէկ մրցաշարքին երրորդ հանդիսացաւ:

Խօսեցաք սուսերամարտի, պատմիքընի եւ պոլիսիկի մասին, որոնք քիչ կիրարկուող մարզախաղեր են Հ.Մ.Ը.Մ.ի մէջ, ուրիշ ի՞նչ մարզախաղեր կը կիրարկէք արդէօք:

-Պաղատաւի մասնաճիւղը կը կիրակէ 12 մարզախաղ. պասքեթպոլ (առաջնակարգ, երիտասարդական, կրտսեր, պատանեկան, մինի-պասքէթ, աղջիկներ), վոլիպոլ (աղջիկներ առաջնակարգ եւ երիտասարդական), հէնտպոլ (տղաք), թենիս (տղաք եւ աղջիկներ), փինկ-փոնկ (տղաք եւ աղջիկներ), պատմիսթըն (տղաք եւ աղջիկներ), սուսերամարտ (աղջիկներ), պոլիսիկ (տղաք), մինի-ֆուլիպոլ (տղաք), ճատրակ (տղաք), մարմնամշակում (տղաք) եւ քոնկ ֆուլ (տղաք):

Աւելցնելիք բան ունի՞ք:

-Պաղատաւի մասնաճիւղը վերջին 5 տարիներուն շատ դժուար պահերէ անցաւ: Պատահեցաւ օր, երբ նախորդ վարչակարգի գինուորները միութեանս ակումբին կարգ մը բաժինները քար ու քանդ ըրին: Մեր տղաքը սակայն բոլոր վերանորոգեցին: Հ.Մ.Ը.Մ.ի անդամները տէր ու պաշտպան եղան դաղութին ազգային կայուածներուն, հաստատութիւններուն եւ Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան, փաստելով որ իրենք իսկապէս «միշտ պատրաստ» են եւ իրենց կեանքին գնով տէրն են Հ.Մ.Ը.Մ.ականի իրենց խոստումին:

Made from one single slice of natural Australian opal

Classique
OPAL DIAL WATCH

Sarkis Der Bedrossian

*Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.
123 Clarence Street
Sydney 2000
Australia*

Phone: +61 2 9290 2199
fax: +61 2 9262 1630
Website: www.classiquewatches.com
Email: Info@classiquewatches.com



ՖՈՒԹՊՈՒԼԻ ԻՐԱԲԱՐԱՐԸ՝ ՊԵՏԻԿ ՉԱՐՇԱՖԵԱՆՆ

Ուրբաթ, 19 Յուլիսի 1980ի երեկոյան ժամը 8ին (Քուէյթի ժամանակացոյցով), Մոսկուայի մէջ տեղի կ'ունենար Ողիմպիական Ձևի խաղերուն բացումը, իսկ Քուէյթի մէջ, նոյն թուականին եւ ճիշդ նոյն ժամուն կը ծնէր Պետիկը:

Կարելի չէ գիտական փաստարկներով եւ կամ թուաբանական հաշուարկներով բացատրել ու պարզաբանել, թէ ինչպէս Ողիմպիական խաղերը ազդեցին իր վրայ, սակայն Պետիկը փոքր տարիքէն սիրեց մարզանքն ու գնդակը, ու երբ ծնողքին հետ 1989ին Քուէյթէն Գանատա հասաւ՝ իր ճամպուրակը լեցուն էր գնդակներով...

Իր հայրը ոգին եւ ֆութպոլի հանդէպ սէրը զինք մղեցին մուտք գործելու Հ.Մ.Լ.Մ.էն ներս՝ ֆութպոլ խաղալու իր տարիքի խումբերէն, սակայն ժամանակ մը ետք հետեւեցաւ իրաւարարութեան դասընթացներու, որոնց շրջանը յաջողութեամբ աւարտելով՝ ստացաւ իր պաշտօնական առաջին պէճը, իբրեւ իրաւարար 1995ին, տասնհինգ տարեկանին:

Այնուհետեւ, սկսաւ իր «մարաթոնը»՝ իրաւարարութեան դժուարին վերելքին հետ, եւ ամէն անգամ որ հանգրուան մը նուաճէր, նոր հանգրուաններ նուաճելու մարտահրաւէրներ կը ցցուէին իր դիմաց, բայց Պետիկ երբեք չընկրկեցաւ, երբեք չյուսահատեցաւ. հակառակ անոր որ տակաւ վերելքը կը դժուարանար եւ պարագաները կը փոխուէին, եւ ինք հար-

կադրաբար իր պայքարը տարածած էր եռեակ ճակատներու վրայ. համալսարան, գործ եւ իրաւարարութիւն:

Շնորհիւ իր կամքին եւ կեդրոնացեալ ու հետեւողական ճիգերուն, ան երեք ճակատներու վրայ տարաւ բացառիկ յաջողութիւն: Այսպէսով՝

ա.- Գոնգորտիա համալսարանէն կը ստանար Պսակաւոր Արուեստից վկայականը, 2003ին:

բ.- Գործի ասպարէզին մէջ կը հասնէր տնօրէնի աստիճանին, 2004ին:

գ.- Իրաւարարութեան ասպարէզէն ներս, Թորոնթոյի մէջ կատարուած ազգային իրաւարարի պէճի քննութիւններու արդիւնքներուն հիմամբ կը ստանար համապատասխան պէճ, 2007ին:

Յետագարձ ակնարկ մը նետելով անցնող 13 տարիներու վրայ երկարող իր իրաւարարութեան փորձառութեան վրայ, հակիրճ ձեռով կ'ամփոփենք.-

Ա.- Գանատայի տարածքին.-

1.- Լաւայի շրջանին մէջ իր տարած շխատանքներուն առ ի գնահատանք՝ ան ստացաւ շնորհակալագիր House of Communi անդամ Լաւայի ներկայացուցիչէն, իսկ 2005ին՝ Լաւայի Federationէն ստացաւ յուշատախտակ, իբրեւ Arbitre Elite:

2.- Քէպէճ նահանգի տարածքին, իրաւարարութեան մարզէն ներս, իբրեւ օգնական իրաւարան (Arbitre Touche), Քէպէճի Ֆետերասիոնը Պետիկը պարգեւատրեց «Drapeau D'or» ոսկեայ դրօշակ յուշատախտակով, 2005ին:

3.- Յաճախ հրաւիրուեցաւ Մոնթրէալի Impactի խաղերուն:

4.- Վեց տարի է Վար ան կը հրաւիրուի Գանատայի ախոյեանութեան եւ Գանատայի համալսարաններու ախոյեանութեան եզրափակիչ խաղերը ղեկավարելու:

5.- Օնթարիոյ նահանգի Թորոնթօ քաղաքի եւ Գանատայի մայրաքաղաք Օթթավայի մէջ կայացած խաղերուն բերած է իր մասնակցութիւնը:

6.- Իր մասնակցութիւնը բերած է նաեւ Պրիթիչ



Իրաւարար Պետիկ Չարշաֆեան Ռոմարիոյի տոնին:

Քոլումբիայի Վանդուվերի մէջ կատարուած ախոյեանական խաղերուն:

7.- Հրաւիրուած է Նովոբորչեայ նահանգի Հալիֆաքս քաղաքին մէջ կատարուած ախոյեանութեան խաղերուն:

8.- Եղած է Սասքաչուան նահանգի Սասքաչուան քաղաքը, իբրեւ իրաւարար:

9.- «Իլ տը Փրենս էտուարտ» նահանգի Շարլըթաուն քաղաքին մէջ պատասխանատուները Պետիկը հռչակած են տիպար եւ պարտաճանաչ իրաւարար:

Գանատայի առընթեր, ան հրաւիրուած է Միացեալ Նահանգներ, U.S.A. Soccer Cupի խաղերուն:-

ա.- Մինիսոթիս նահանգի Մինիսոթիթա քաղաքը:

բ.- Ֆլորիտա նահանգի Թամպա Պէյ քաղաքը:

գ.- Թեքսաս նահանգի Տալաս քաղաքը:

Պետիկին նկարագրի դիտերէն հիմնականներն են՝ արդարութիւնը, խստութիւնը եւ ֆուլթայոյլի օրէնքներու բծախնդիր կիրարկումը եւ ճիշդ ասոր համար ան յարգուած եւ սիրուած է թէ՛ պատասխանատուներէն, թէ՛ մարզիչներէն եւ թէ՛ խաղացողներէն:

Ան կը հաւատայ, որ մարզանքը ընդհանրապէս եւ ֆուլթայոյլը յատկապէս ազդու միջոցներ են հոգին ազնուացնելու եւ առողջ մարմին կերտելու համար:

ԽՈՍՏՄՆԱԼԻՑ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆՆԵՐ

ԾԱՆՕԹԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱԷՊԻ ՊԱՍՔԵԹՊՈՒԻ ԱՂԶԿԱՆՑ ԽՈՒՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԷՆ ՔՈՅՐ ԱԻՍԻԱ ՄԱԿԱՐԵԱՆԻ ՀԵՏ

Հ.Մ.Ը.Մ.Ի Հալէպի Լրատուական Յանձնախումբ ՅԱԼԷՊ

Եթէ կարելի է, ծանօթացուցէք ղուք ձեզ:

- Ծնած եմ Հալէպ, 1991ին: Նախնական ուսումս ստացած եմ Ազգ. Հայկազեան վարժարանէն, իսկ այժմ ուսանող եմ Քառէն Եփփէ Ազգ. Ճեմարանին: 10րդ կարգի տարեշրջանը աւարտեցի յաջողութեամբ:

Ո՞ր թուականին մաս կազմեցիք Հ.Մ.Ը.Մ.Ի պասքէթի խումբին:

- Երբ առաջին դասարան էի, մարզանքի ուսուցչուհիս՝ քոյր Մակի Տոնապետեանը զիս Հ.Մ.Ը.Մ.Ի դաշտը տանելով ծանօթացուց խումբի մարզիչ եղբ. Գէորգ Արթինեանին: Այնուհետեւ ըսկրայ փորձերու: Հետեւաբար, փոքր տարիքէս մաս կազմեցի աղջկանց առաջին խումբին:

Ի՞նչպէս կարողացաք հասնիլ այս մակարդակին:

- Փորձերուն լրջութեամբ հետեւելով, նաեւ ընտանիքիս քաջալերանքը եւ խաղերուս մնայուն ներկայութիւնը



մեծ դեր ունեցան: Կարեւոր դեր ունի նաեւ եղբայրս, որ մօտէն կը հետեւի փորձերուս: Մինչեւ այսօր նախքան մրցումի մը ներկայանալս ան ցուցմունքներ կու տայ ինծի:

Ի՞նչպէս կրնաք դասաւորել ձեր ժամերը ուսումնական եւ մարզական գետնի վրայ:

- Ես մէկ բանի համոզուած եմ, որ

մարդ այն գործը որ սիրելով կ'ընէ, անպայման կը յաջողի: Փոքր տարիքէս մօրս քաջալերանքով դաշնամուր նուազած եմ եւ արդէն այս տարի աւարտեցի «Բարսեղ Կանաչեան» երաժշտանոցը, իսկ դասերուս պարագային, եթէ պասքէթի փորձերուս չերթամ, չեմ կրնար դասերս ըմբռնել, որովհետեւ առածը կ'ըսէ՝ «Առողջ միտքը առողջ մարմնի մէջ» եւ փաստը, որ Պրէօվէի դասարանը յաջողեցայ 261 նիշով:

Ի՞նչ լաւ եւ վատ դէպքեր կը յիշէք:

- Իբրեւ լաւ դէպք, երբ խումբի մարզիչ եղբայր Գէորգ Արթինեանը տարեդարձիս առիթով ինծի նուիրեց տետրակ մը, ուր կը յիշատակէր մարզական կեանքիս ընթացքին պատահած դէպքերը:

Իսկ վատ դէպք, երբ անցեալ տարի Ճալապի մրցումին առաջին կիսախաղին 15 կէտով յաղթական էինք, խաղը 5 կէտով պարտուեցանք, ինչ որ պատճառ եղաւ ախոյեանութիւնը կորսնցնելու:

Ի՞նչ են ձեր ապագայ ծրագիրները:

- Երբայ է օր մը Մ. Նահանգներու պասքէթպոլի համալսարաններէն մէկուն դասընթացներուն հետեւիլ, օգտը

Լելու եւ ապագային միութեան օգտակար դառնալու համար:

Եթէ այլ խումբերէ առաջարկ Գերկայանայ ձեզի, ի՞նչ կ'ըլլայ ձեր կեցուածքը:

- Երբեք չեմ մտածեր այդ ուղղութեամբ, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ը իմ տունս է եւ ես Հ.Մ.Ը.Մ.ով է որ հասայ այս մակարդակին:

Ո՞ր մարզիչին օրով դուք ձեզ բարելաւուած զգացիք:

- Բոլոր մարզիչներն ալ նորութիւն մը տուած են ինձի, թէ՛ եղբ. Գէորգ Արթիւրեանը, թէ՛ եղբ. Հրաչ Պատիկեանը եւ թէ՛ եղբ. Մանօ Հալլաճեանը:

Ի՞նչ է ձեր կարծիքը աղջկանց առաջին եւ կրտսերներու խումբերուն մասին:

- Աղջկանց խումբին պարագային, խաղացողները մեծամասնութեամբ պատանիներ են, բազմաթիւ մեր

մրցակից խումբերուն: Սակայն այս տարի աւարտականին հասնիլը անդամներուն փորձառութիւն տուաւ եւ կը կարծեմ, որ եթէ խումբը շարունակէ այս կազմով, գալիք տարիներուն ան պիտի կարողանայ ախոյեանութեան տիրանալ:

Իսկ կրտսերներու խումբը երրորդ տարին ըլլալով տիրացաւ Հալիպի ախոյեանութեան: Այս տարի, բոլորին փափաքն է հանդիսանալ Սուրիոյ ախոյեան:

Ալիսիային համար որո՞նք են խտալ խաղցողը, լաւագոյն մարզիչը, միջազգային խաղացողը եւ միջազգային մարզիչը:

- Իտէալ խաղացողը՝ Էլիզապէթ Սուրատեան, լաւագոյն մարզիչը՝ բոլոր մարզիչները, որոնք զիս մարզած են, որովհետեւ կը կարծեմ թէ խաղացող ինքն է որ պէտք է համակերպի մարզիչին գաղափարներուն: Միջազգային խաղացողը՝ WNBAի խաղացող Լիզա

Լիզլին, իսկ միջազգային մարզիչը՝ Լոս Անճելըս Լէյքըրզի նախկին մարզիչ Ֆիլ Ճաքսընը:

Ամէնէն շատ կէտ արձանագրած ձեր մրցումը:

- Մինի-պասքէթի մրցումի մը ընթացքին 50 կէտ արձանագրեցի:

Պատքեթն գատ ի՞նչ նախասիրութիւններ ունիք:

- Դաշնամուր նուագել եւ ֆութպոլ խաղալ:

Ձեր վերջին խօսքը:

- Նախ կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել այս հարցազրոյցին համար: Երկրորդ՝ բոլոր մարզիչներուն կ'ուզեմ ըսել թէ խաղան Հ.Մ.Ը.Մ.ին համար՝ մէկ կողմ դնելով իրենց անձնական հարցերը, միշտ նուիրականացելու համար Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբան «Բարձրացի՛ր-բարձրացուր»:

With the compliments of

Restaurant Al-Mayass



Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի սկաուտական կազմը 1990ին:

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԻՆՉՊԷՍ ՄԿՍԱԲ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Կարպիս Գույումճեան ԱՌԵՆՔ

Կլիկիտյ պարպումէն եւ Իզմիրի 1922ի աղէտէն վերապրող բազմահազար հայեր ասպնջականութիւն կը գտնեն Յունաստան եւ կը հաստատուին Աթէնքի մօտիկ Ֆիքսի եւ հետզհետէ Կեսարիանիի եւ Փիրէայի նաւամատոցին մօտիկ Գոքինիտյ եւ Լիփազմայի այդ օրերուն տարածուն դաշտավայրեր եղող մասերուն մէջ, եւ իրենց ջանքերով, վրաններու եւ հիւղակներու տակ պատսպարուելով, կը սկսին եկեղեցիի եւ դպրոցի մասին մտածել, երբ հարիւրաւոր երկսեռ հայ տղաք աննպատակ կը թափառէին փողոցները:

Ո՞ր ծնողքը իր զակիւն կրթութեան հոգը պիտի ունենար, երբ տակաւին իր առօրեայ ապրուստն անգամ չէր կրնար ապահովել:

Նորակազմ ազգային մարմինները, եկեղեցիի ու դպրոցի յարմար հիւղակ մը կառուցելու մասին կը մտածէին, իսկ Կլիկիայէն գաղթած հայ արիւներու խմբապետները, թափառական նորահաս հայ մնացորդաց սերունդին օգտակար ըլլալու համար իրարու միջեւ խորհրդակցութիւններ կ'ունենային: Այսպէս կատարուած ջանքերուն իբրեւ արդիւնք, եւ մանաւանդ շնորհիւ ազգային մարմիններու քաջալերանքին, կարե-

լի կը դառնայ յառաջացնել հայ արիւներու խնամակալ մարմին մը, կեդրոն ունենալով Ֆիքսի գաղութը: Տղաքը կը սկսին ցերեկները բացօթեայ դաշտերու մէջ համախմբուելով խաղեր ու մարզանքներ կատարել, իսկ երեկոները բարեսիրական «Նիր իսթ Ռիլիֆ» կազմակերպութեան կողմէ տրամադրուած մեծկակ վրանի մը տակ ելոյթներ ու դասախօսական հաւաքոյթներ ունենալ:

Արդարեւ, հայ արիւներու շարժումները յոյն սկաուտական կեդրոնին ուշադրութիւնը գրաւելով՝ վերջինները կը սկսին հետաքրքրուել ու հոգածութիւն ցոյց տալ յետոն ձեռք սկաուտական տարագ նուիրելով:

Շնորհիւ տարուած աշխատանքներուն, հայ արիւներու շարժումները կը բազմանան, կը սկսին տարածուել այլ գաղութներուն մէջ եւս: Այսպիսով կը կազմուին չեփորահարներու եւ թմբակահարներու խումբեր եւ ազգային Եռագոյն դրօշի առաջնորդութեամբ, ազգային եւ եկեղեցական ելոյթներու կարգին, կը մասնակցին նաեւ յոյն ազգային տօնակատարութեանց տողանցքներուն, հիացում ու պատիւ բերելով հայ ազգին:

Այդ օրերուն, թուրքին եսթաղանէն փրկուած, Յունաստանի Քերքիրա կղզին պատսպարուած հայ արիւներու Աթէնք փոխադրումով հայ արիւներուն թիւը աւելի կը բազմանայ:

1924ին, Պոլիսէն Փարիզ իրենց երթին, Աթէնք այցելելով, Հ.Մ.Ը.Մ.ի ղեկավար դէմքեր շփումներ կ'ունենան արիւներու պատասխանատու խմբապետներու հետ եւ շնորհիւ տիրող հասկացողութեան ոգիին, Կլիկիայէն եւ Պոլիսէն գաղթած սկաուտ խմբապետներու մասնակցութեամբ կը կազմուի սկաուտական վերին մարմին մը, որ Հ.Մ.Ը.Մ.ի եւ ազգային Եռագոյն դրօշին տակ կը համախմբէ հայ արիւներու խումբերը:

Յունաստանի մէջ, Հ.Մ.Ը.Մ. եղած է ու կը մնայ երկսեռ նորահաս սերունդներու իրական ազգային դաստիարակը:

Կրթական որեւէ հաստատութեան նման, առանց սեռի ու դաւանանքի խտրութեան Հ.Մ.Ը.Մ. իր դռները բաց պահած է ու կը պահէ հայ մանուկին, պատանիին ու երիտասարդին առջեւ, մարզականի կարգին ջամբելով ազգային դաստիարակութիւն, մեկնակէտ ու նպատակ ունենալով իր «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանը:

Այս առիթով չենք կրնար անտես անցնիլ ու չըսել, թէ Հ.Մ.Ը.Մ.ի անցեալի տղաքը հետագային մեծ մասամբ Յունաստանի եւ այլ գաղութներէն ներս, ազգային կեանքին մէջ գնահատելի ծառայութիւններ մատուցող եւ դիրքեր գրաւող անձեր եղած են:



ՓԱՌԱՇՈՒՔ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ԱԹԷՆՔԻ ՄԷՋ

**ՆՈՒՒՐՈՒԱԾ՝ ՀԱՅ ՍԿԱՌՈՒՏՈՒԹԵԱՆ 95ԱՄԵԱԿԻՆ
ԵՒ Հ.Մ.Ը.Մ.Ի ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՍԿԱՌՈՒՏՈՒԹԵԱՆ 85ԱՄԵԱԿԻՆ**

Թղթակից ԱԹԷՆՔ

ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան հովանաւորութեամբ եւ Յունաստանի Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ, Կիրակի, 9 Դեկտեմբեր 2007ի առաւօտեան ժամը 11.30ին, Աթէնքի գինուորական թանգարանի սրահին մէջ փառաշուք հանդիսութեամբ մը նշուեցան հայ սկաուտութեան 95ամեակի եւ Հ.Մ.Ը.Մ-ի Յունաստանի սկաուտութեան 85ամեակի յօբելեանները: Հանդիսութիւնը վայելեց Յունահայոց Թեմի Առաջնորդ Խորէն Եպս. Տողրամաճեանի եւ Յունաստանի մէջ Հայաստանի դեսպան Վահրամ Կաթոյեանի նախագահութեամբ:

Թանգարանին մուտքին, Շրջանային Վարչութեան, Աթէնքի ու Գոքինիոյ սկաուտական եւ խմբապետական կազմերու անդամները հիւրերը ընդունեցին եւ առաջնորդեցին դէպի սրահ:

Հանդիսութեան բացումը կատարեց Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Պօղոս Չոլաքեան: Ան ներկաները հրաւիրեց վայրկեան մը յոտնկայս լուծեամբ յարգելու յաւատարմութեամբ Հ.Մ.Ը.Մ-ականներու յիշատակը: Եղբ. Չոլաքեան ողջունեց բոլոր մասնակիցներու ներկայութիւնը եւ ըսաւ, որ յօբելեանական ձեռնարկը անգամ մը եւս քով-քովի բերած է հայ եւ յոյն ազգերու ներկայացուցիչները, ինչ որ խորհրդանշիչը կը հանդիսանայ այն երկար ճանապարհին, ուրկէ անցած են հայ եւ յոյն ժողովուրդները իրենց պատմու-

թեան ընթացքին: Եղբայրական եւ բարեկամական յարաբերութիւնները իրենց արձագանգը ունեցած են երկու ազգերու բոլոր տեսակի ձեռնարկներուն մէջ: Այսպէս կատարուած է նաեւ սկաուտական միջազգային ընտանիքէն ներս եւ ընկերային հսկայ համակարգ կազմող սկաուտական շրջանակներուն մէջ:

Շարունակելով, եղբ. Չոլաքեան ըսաւ. «Թերթատելով սկաուտութեան պատմութիւնը կը համոզուիք դէպքերու եւ երեւոյթներու, որոնք յատկանշած են հայ սկաուտութեան 95ամեայ պատմութիւնը, Պոլսոյ մէջ իր հիմնադրութենէն ի վեր: Ու դեռ, աւելի հարազատ ու մտերիմ է վերջին 85 տարիներու պատմութիւնը, որ կը յատկանշէ Յունաստանի մէջ հայ արիներու ներկայութիւնը, նոյնիսկ այն վայրկեանէն, երբ հիւրասէր Յունաստանը ընդունեց Փոքր Ասիոյ աղէտէն ճողոպրած հայութիւնը իր հիւրընկալ արիւնքով մտքով:»

Այնուհետեւ, եղբ. Չոլաքեան հաստատեց. «Այսօր, 85 տարի ետք, կը կանգնիք հոս, ներկայ, ոսկեայ յօբելեանին առիթով եւ յուզումով կը հաստատենք, թէ տարիներու փորձառութիւնը, ուրախութիւններն ու վիշտերը մեզ յաջողապէս առաջնորդեցին եւ հասցուցին նորանոր յաջողութիւններու: Այս ձեռնարկը այլեւս աւանդութիւն դարձած է գաղութէն ներս, որովհետեւ հնգամեայ լրացուցիչ յօբելեաններու առիթով չորրորդ անգամն է որ կը կազմակերպուի ան վերջին քսան տարիներու ընթացքին:»

Հանդիսութեան գեղարուեստական յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին Անահիտ Տէր Տաճատեան (դաշնակ) եւ Արսէն Տէր Տաճատեան (մարինպա), որոնք ներկայացուցին չորս տարբեր յորինումներ՝ Լազարոս Սարեանի «Առաւօտեան սերենատ», Ալեքսանդր Յարութիւնեանի «Էքսփրտիթ»ը եւ Արամ չատուրեանի «Լեզգինգա»ն եւ «Սուրբուրու պար»ը:



ՈՂՋՈՅՆԻ ՈՒՂԵՐԶ

Յարգելի Հ.Մ.Ը.Մ.ականներ, պատիւը եւ երջանիկ պարտականութիւնը ունենք Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Կեդրոնական Վարչութեան անունից ողջունելու Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի սկաուտութեան 85ամեակի եւ հայ սկաուտութեան 95ամեակի առթիւ:

Յիրաւի, պահը պատմական է, եւ այն մեծ խորհուրդ ունի իր մէջ: Հերթական անգամ բերկրանքով եւ հպարտութեամբ հաւաքուել են Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան բազմաբոյր անդամները, որպէսզի միութեան անցած փառաւոր ճանապարհի գնահատութեամբ, հայրենաճուր ցերկայ գործունէութեամբ եւ ապագայ հայրենաշէն ծրագրերի նախանշումով ի մի բերուի Հ.Մ.Ը.Մ.ի հայապահպանման պատմական առաքելութիւնը:

Սիրելի հայորդիներ, հանրայայտ ճշմարտութիւն է, որ հայրենիքներն ապրում են հայրենասիրութեամբ եւ ընկնում հայրենասիրութեան պակասից: Յարգելիներ, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Կեդրոնական Վարչութիւնը խորապէս համոզուած է, որ յանձնինս Հ.Մ.Ը.Մ.ականների՝ հայ ազգն ունի հայրենասէր, ֆիզիքապէս առողջ, հզօր, բարոյական, մտաւոր եւ հոգեւոր մեծ ներուժի սերունդ, որը ճանաչում է իր ազգային բիբլիական արմատները, մեր փառապսակ նախնիների ազգանքէր վարքն ու փառքը եւ միշտ պատրաստ է ապրել, արարել եւ պայքարել հայրենիքի համար: Ասել է թէ՛ Հ.Մ.Ը.Մ.ականները ազգասէր են եւ մարդասէր, բարձրանպատակ են եւ ինքնաճանաչ, կրում են հայրենասիրութեան առաքինութիւնը:

Յարգելիներ, որպէս մեր հնամենի ազգի կենարար երակների՝ հէնց ձե՛ր մէջ ու ձե՛ր միջոցով պիտի հայրենիքի ազգապահպան կենսատու ուժն ու զօրութիւնը փոխանցուեն աշխարհասփիւռ մեր միւս եղբայրներին ու քոյրերին, աշխարհի որ ծալքում էլ լինեն նրանք, որպէսզի իրենց հոգիներում սրբութեամբ կրեն մեր Մասիսներն ու Հայկ Նահապետին, Մեսրոպ Մաշտոցին, Վարդան զօրավարին ու Վարդանանց ուխտը, Նարեկացուն ու Չարենցին, Սիամանթոյին ու Վարուժանին, մեր միւս երեւելիներին, որպէսզի ապրեն հայօրէ՛ն, խօսեն հայերէ՛ն՝ յանուն մեր պատմական Տեսիլքի լիարժէք իրականացման, յանուն Ազատ, Անկախ, Միացեալ Հայաստանի:

Ուրեմն, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Կեդրոնական Վարչութիւնը կրկին ողջունում է ձեզ, սիրելի Հ.Մ.Ը.Մ.ականներ, ասում՝ բարո՛վ էք եկել Մայր Հայրենիք, որի կառուցումը մեզնից իւրաքանչիւրի երջանիկ պարտականութիւնն է ու մեծ պատիւը:

Ուրեմն, արժանի՛ լինենք անկախ պետութիւն եւ պետականութիւն ունենալու:

Ուրեմն, Հ.Մ.Ը.Մ.ականներ՛ր, հայրենիքի համար միշտ պատրա՛ստ:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



Գնդ. Ռամազեան կը փոխանցէ Հայաստանի պաշտպանութեան նախարարին ուղերձը:

Ողջոյնի խօսքեր արտասանեցին Յունաստանի խորհրդարանի փոխ նախագահ Անասթասիոս Ներանձիս, ներքին գործոց նախարար Փրոքսիիս Փալոփոլոս, պաշտպանութեան նախարար Էվանկելոս Մէյմարաքիս եւ Հայաստանի դեսպան Վահրամ Կաթոյեան:

Անասթասիոս Ներանձիս նշեց, որ յատուկ նշանակութիւն ունի Յունաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան թուակաւոր, նկատի առած որ գաղթականական առաջին ալիքը երկիր հաստատուեցաւ 1922ին: Դպրոցներու եւ եկեղեցիներու անմիջական հաստատումէն ետք, առաջին միութենական աշխատանքը եղաւ սկաուտական խումբերու ստեղծումը, ինչ որ պատահական չէր, այլ ցոյց կու տար հայ ժողովուրդին փափաքը՝ երիտասարդութեան յատուկ գուրգուրանք ցուցաբերելու, իր ազգին ապագան երաշխաւորելու համար:

«Յունաստանի խորհրդարանը կը ճանչնայ եւ կը գնահատէ Յունաստանի հայ համայնքին ներդրումը յունական ընկերութեանն ներս», ըսաւ Ներանձիս:

Նախարար Փրոքսիիս Փալոփոլոս իր ողջոյնի խօսքին մէջ յայտնեց, թէ հայերն ու յոյները միշտ ապրած են համագործակցութեան բացառիկ լաւ պայմաններու մէջ՝ իրարու օժանդակելով: Ան շեշտեց հաւաքական յիշողութիւնը պահպանելու կարեւորութիւնը, աւելցնելով, թէ հայ եւ յոյն ազգերը նմանօրինակ յիշողութիւններ ունին, որովհետեւ իրենց մեծագոյն աղէտները քանի մը տարուան տարբերութեամբ տեղի ունեցած են, բայց չեն կարողացած ընկճել ո՛չ հայ, ո՛չ ալ յոյն ազգերը:

Ապա բեմ բարձրացաւ Յունաստանի պաշտպանութեան նախարար Էվանկելոս Մէյմարաքիս եւ իր կարգին անդարդարձաւ հայ-յունական համագործակցութեան, յայտնելով թէ երկու երկիրները ամէնօրեայ կապ ունին պաշտպանութեան մարզէն ներս, միասնաբար գործակցելով եւ մասնակցելով միջազգային խաղաբարար ուժերու: Երկու երկիրներու յարաբերութիւնը կրնայ մեծ դեր ունենալ շրջանէն ներս խաղաղութեան կայունացման իմաստով, ըսաւ նախարարը, աւելցնելով որ «Էվելիտոն» սպայից վարժարանին մէջ ուսանող հայ սպաները բացառիկ լաւ տպաւորութիւններ ձգած են իրենց կարգապահութեամբ եւ պարտաճանաչութեամբ:



Հայաստանի դեսպան Վահրամ Կաթոյեան իր խօսքին մէջ ընդգծեց հայ սկաուտութեան ներդրումը հայապահպանման եւ հայեցի դաստիարակութեան բնագաւառներէն ներս եւ ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ը իր գործունէութեամբ հաստատած է աշխարհասփիւռ հայութեան պայքարելու կամքն ու յաղթելու կորովը, այդ վեհ գաղափարներով դաստիարակելով հայ պատանիներն ու աղջիկները: «Հայ սկաուտութեան առաքելութիւնը ոչ միայն իր անցեալն է, այլեւ՝ անընդհատ նորոգուող ներկան ու Հայաստանի Հանրապետութեան անկախացումով պայմանաւորուած պայծառ ապագան», ըսաւ դեսպան Կաթոյեան:

Ապա, դեսպան Կաթոյեան հաստատեց, որ «Արցախեան յաղթանակը եւ Հայաստանի Հանրապետութեան շարունակական զարգացումը նոր ուժ եւ լիցք կը հաղորդեն Սփիւռքի բազմադարեան գոյութեան ընթացքին ձեւաւորուած կառոյցներուն՝ աւելի ամուր մնալու հայապահպանման դիրքերուն վրայ»:

Հանդիսութեան գլխաւոր խօսքը փոխանցեց Յունաստանի սկաուտական ֆետերասիոնի նախկին նախագահ Իոաննիս Ծէն: Իր խօսքին մէջ ան մանրամասնօրէն անդրադարձաւ հայ սկաուտութեան պատմութեան հանգրուանները ճշդօր հիմնական թուականներուն, նշելով թէ 1912ին, Անգլիոյ մէջ Լորտ Պէյտըն Փաուըրի կողմէ սկաուտութեան հիմնադրութենէն հազիւ 5 տարի ետք, Յովհաննէս Հինդլեան Պոլսոյ հայկական քոլէճի տնօրէնը՝ հայկական սկաուտութեան հիմը կը դնէր: Վեց տարի ետք, Յովհաննէս Հինդլեան, Գրիգոր Յակոբեան եւ գաղափարակից տղաք կը հիմնէին Հ.Մ.Ը.Մ.ը՝ 1915ի Հայկական Յեղասպանութենէն ճողոպրած հայ նոր սերունդները պահպանելու մտածումով:

Յունաստանի մէջ, սկաուտական առաջին խմբակը կը ըստեղծուի 1922ին, Տուրքոլիի մէջ, Պետրոս եւ Լեւոն Գայեան եղբայրներուն կողմէ: Այդ պատճառով ալ կը ստանայ թիւ 23 անուանակոչումը: Նոյն տարին, Նիքէայի մէջ կը ստեղծուի Գոքինիոյ խումբը՝ Արչակ Սեւակեանի եւ Առաքելեան եղբայրներուն կողմէ: Այս խմբակն ալ ճանաչում կը ստանայ 1924ին:

Օրուան պատգամախօսը Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի ծնունդին

անդրադառնալով յայտնեց, որ 1991ին Հայաստանի անկախացումով կը հիմնուի Հայաստանի Ազգային Սկաուտական Կազմակերպութիւնը, որ այսօր կը հաշուէ բազմահարիւր անդամներ եւ մաս կը կազմէ Հ.Մ. Շարժումին:

Խօսքերու կողքին, հանդիսութեան ընթացքին ընթերցուեցաւ Հայաստանի պաշտպանութեան նախարար Միքայէլ Յարութիւնեանի ուղերձը:

Ուղերձը ընթերցեց Յունաստանի մէջ Հայաստանի դեսպանատան գինուորական կցորդ փոխ գնդապետ Սամուէլ Ռամազեան:

Ուղերձին մէջ կ'ըսուէր, թէ «Հ.Մ.Ը.Մ.ը կազմուեցաւ մեր ժողովուրդի համար բաւական ծանր ժամանակաշրջանի մը մէջ, նպատակ ունենալով հայեցի դաստիարակութիւն ապահովել եւ ինքնապաշտպանութեան ոգի պահպանել օտար ափեր ապաստանած երիտասարդ սերունդին համար: Եւ պատահական չէ, - կը շարունակէր ուղերձը, - որ 1918-1920 թուականներու անկախ պետականութեան անկումէն ետք, Հ.Մ.Ը.Մ. առաւ հայկական բանակի առաջին քայլերը՝ «Յառաջ նահատակ»ը, իբրեւ սեփական քայլեր, զայն պահելով մինչեւ օրս»:

Պաշտպանութեան նախարարը իր ուղերձին մէջ կը նշէր նաեւ, որ «Հաւատարիմ իրենց կոչումին, Հ.Մ.Ը.Մ.ի բովով անցած են հազարաւոր երիտասարդներ, որոնք հայ ժողովուրդի զաւակները ըլլալով՝ լաւագոյնս կատարած են իրենց քաղաքացիական պարտքը այն երկրին հանդէպ, որ դարձած է իրենց երկրորդ հայրենիքը»:

Այս առիթով ընթերցուեցաւ նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին կոնդակը եւ Պոլսոյ հայոց Պատրիարք Մեսրոպ Արք. Սուլթանի Օրհնութեան Գիրը (Կոնդակը եւ Օրհնութեան Գիրը տեսնել բ. կողքին մէջ):

ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄՆԵՐ

Հանդիսութեան ընթացքին տեղի ունեցան շարք մը պարգեւատրումներ: Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի շրջանի ոսկեայ շքանշանով պարգեւատրուեցան:-

- Յունաստանի մէջ Հայաստանի դեսպան Վահրամ Կաթոյեան:
- Յունաստանի սպայից վարժարանի պատասխանատու եւ փոխ զօրավար Փանայոթիս Եանոփուրոս:
- Յունաստանի մէջ Հայաստանի դեսպանատան գինուորական կցորդ փոխ գնդապետ Սամուէլ Ռամազեան:
- Ալէքէնքի փոխ քաղաքապետ Խրոնիս Աքրիթիտիս:
- Աղեքսանարիոյ Լէոնտուփոլէոս մեթրոպոլիտ Տիոնիսիոս Սրբազան:
- Արքեպիսկոպոս Տամասքինոս Քոքինիս:
- Փոխ զօրավար Եորդոս Իէրափոսթոլոս:
- Փոխ ծովակալ Եորդիոս րենիթիս:
- Հակաքաղցկեղային արշաւի գործունէութեամբ յատկանշուած Նիքոս Վուրիթիս:
- Հիւանդանոցային սարքաւորումներու եւ մարդասիրական օգնութեան մարզէն ներս Գոսթաս Նասթոս:
- Յունաստանի սկաուտական ֆետերասիոնի նախկին նախագահ Արիս Սքլիվանիթիս:



- Նախկին ընդհանուր սկաուտապետ Տիմիթրի Մարքուլիս:
- Սկաուտական ֆետերասիոնի նախկին նախագահ Նիքոս Կածոլաս եւ Նիքոլաոս Պարիս:

Պարզեւատրումները կատարուեցան թեմակալ Առաջնորդ Խորեն Եպս. Տողրամաճեանի, Յունահայոց Ազգային Վարչութեան ատենապետ տոքթ. Արմէն Տէրեանի, Յունաստանի Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Գէորգ Գոլանեանի, Յունաստանի խորհրդարանի նախկին նախագահ Ափոսթոլոս Գաքլամանիսի եւ Յունաստանի խորհրդարանի երրորդ փոխ նախագահ Անասթասիոս Ներանձիսի կողմէ:

Նոյն առիթով, Հ.Մ.Ը.Մ.էն ներս իրենց երկար տարիներու ծառայութիւններուն համար պարգևատրուեցան հետեւեալ եղբայրները.- Կարօ Աւագեան, Վրէժ Ապահեան, Գրիգոր Գզրբեան, Գէորգ Աւագեան, Յակոբ Տէր Յովակիմեան, Յակոբ Եթիմեան եւ Կարպիս Վարդանեան:

Յաջորդաբար պատուոյ գիրք ստացան.-

- Ստամբուլի Գոնտոյորդիս, արևմտաուսթեան արշաւէն ներս իր ծառայութիւններուն համար:

- Անտրէաս Աքալցէաս, Աթէնքի նահանգապետութեան փրոթոքոլի իր պաշտօնին բերմամբ հայութեան մօտ գտնուելուն համար:

- Գեղանոյ Աւարեան, հայ կրթական մարզէն ներս իր երկարամեայ աշխատանքին ու նուիրումին համար:

- Անտրէաս Փափասփիրու, զինուորական թանգարանի կեդրոնական վարչութեան նախագահ:

- Ռիթա Գարայիանի, Յունաստանի արենոյշներու ֆետերասիոնի նախագահ:

- Արիս Աքլիվանիոթիս, Յունաստանի սկաուտական ֆետերասիոնի նախկին նախագահ:

- Արփի Մարկարոսեան-Փափագեան, Յունաստանի հայ արենոյշներու կազմին հիմնադրութեան համար:

Աւարտին, պատուոյ տախտակ մըն ալ յանձնուեցաւ եղբ. Պօղոս Չոլաքեանին՝ Թրափեզունտայի Սուրբ Էֆթիմիոսի ներկայացուցիչին կողմէ:

- Հ.Մ.Ը.Մ.ի քայլերդ «Յառաջ նահատակ»ով հանդիսութիւնը հասաւ իր աւարտին:

ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՆԵՐԸ

Հանդիսութեան ներկայ գտնուեցան Յունաստանի ներքին գործոց նախարար Փրոքոփիս Փալոփոլոս, պաշտպանութեան նախարար Էվանկելոս Մէյմարաքիս, խորհրդարանի փոխ նախագահներ Անասթասիոս Ներանձիս եւ Վերա Լիքոլայիտու, նախկին նախագահ Ափոսթոլոս Գաքլամանիս, ծովային նախարարի ներկայացուցիչ ծովակալ Եանիս Թեոֆանիտիս, կրթութեան նախկին նախարար Փեթրոս Էֆթիմիու, երեսփոխաններ Տիմիթրիս Լինձերիս եւ Եանիս Տիամանտիտիս, Յունաստանի սկաուտական ֆետերասիոնի նախագահ Արիս Աքլիվանիոթիս, ֆետերասիոնի անդամ Եորդոս Փափատաքիս, Յունաստանի արենոյշներու միութեան նախագահ Ռիքա Գարայիանի, փոխ ծովակալ Լիքոլաոս Ֆաթուսիս, փոխ զօրավար եւ Յունաստանի սպայից վարժարանի պատասխանատու Փանայոթիս Եանոփոլոս, գնդապետ Ափոսթոլոս Վարքուրաս եւ Փալոս Արամիտիս, զինուորական թանգարանի կեդրոնական վարչութեան նախագահ՝ փոխ գնդապետ Անտրէաս Փափասփիրու, Յունաստանի ոստիկանական ուժերու փոխ գնդապետ Ղրիզորիոս Վուրդուլիս, հրշէջ սպասարկութեան պատասխանատու Անտրէաս Սերեստելոս, ծովային ուժերու պատասխանատու Փարասքեաս Սալիվերոս, ՓԱՍՕ-Զի նախագահի ներկայացուցիչ Անտոնիս Գարաս, ԼԱՕՍԻ ներկայացուցիչ Սփիրոս Սթամատոփոլոս:

Ներկայ էին նաեւ Յունահայոց Ազգային Վարչութեան ատենապետ տոքթ. Արմէն Տէրեան եւ Վարչութեան անդամներ, Յունահայոց թեմական ժողովի նախագահն ու անդամներ, յարանուանութեանց պետերը եւ կրօնական դասը, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի

ներկայացուցիչ Գեորգ Գոլանեան եւ Կեդրոնական Կոմիտէի անդամներ, Յունաստանի Հայ Դատի Յանձնախումբի անդամներ, ՀՕՄԻ Կեդրոնական Վարչութեան անդամ Լիզա Աւագեան, Հ. Կ. Խաչի եւ Համագայիսի Շրջանային Վարչութեանց եւ Հ.Յ.Դ. Երիտասարդական Միութեան ներկայացուցիչները, ազգային վարժարաններու տնօրէնները:

Ներկայ էր Հայաստանի դեսպան Վահրամ Կաժոյեան, դեսպանատան զինուորական կցորդ փոխ գնդապետ Սամուէլ Ռամազեան եւ Յունաստանի «Էվելփիտոն» սպայից վարժարանէն ներս ուսանող հայ սպաներ:

Ուրախ անակնկալ մըն էր Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի կողակիցին՝ Նանի Օսկանեանի ներկայութիւնը, որ Աթէնք գտնուելով՝ մասնակցեցաւ յոբելէնական ձեռնարկին: Ներկայ գտնուեցան նաեւ տիկին Վալիա Կաժոյեանը եւ Հայաստանի դեսպանատան անդամներ, Լիքեայի քաղաքապետ Սթելիոս Պենթաթոս, Աթէնքի փոխ քաղաքապետներ Խրոնիս Աքրիթիտիս եւ Գոսթաս Փափատաքիս, քաղաքապետական խորհուրդի անդամ Թոնիա Զանելոփոլոս, Փիրեայի քաղաքապետ Փանայոթիս Ֆասուլասի ներկայացուցիչ Փանայոթիս Անկելոփոլոս, հոգեւոր հայրեր՝ Յունաստանի Արք.ի ներկայացուցիչ Իլիաս Տրոսիսոս, Արք. Տամասքիսոս սրբազանը, Լեոնտոփոլի մեթրոպոլիտ Տիոնիսիոս սրբազանը, օտար դիւանագետներ եւ զինուորական կցորդներ, զանազան կազմակերպութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ սկաուտական ֆետերասիոններու ներկայացուցիչներ:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԿԱՌԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԿԱՆԴԱԿԱՆ ԳՆԱԾՅԻ ԿՏՐՈՒՄ

Լոռի Պարագեան
Հայկան Չաքմաքճեան
ԱՐԵՆՔ



ՀՄԸՄԻ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ սկաուտութեան աւանդական գաթային կըրտումը տեղի ունեցաւ Կիրակի, Յունուար 27ին, «Ձաւարեան» ակումբի «Ձաքարեան-Սարաճեան» սրահին մէջ, Շրջանային Սկաուտական Խորհուրդի հովանաւորութեամբ:

Աթէնքի եւ Գոքինիոյ մասնաճիւղերէն 68 եւ 62 քոյր-եղբայրներ ներկայացուցին իրենց պատրաստած սկաուտական տօնական, հայկական եւ հասարակական նիւթերով հայերէն եւ յունարէն ձոխ յայտագիրը:

Հանդիսութիւնը սկսաւ կէսօրէ վերջ ժամը 6.30ին, Շրջանային Սկաուտական Խորհուրդի խմբապետուհի քոյր Գոհար Ալիանաքեանի բացման խօսքով եւ յունական ու հայկական քայլերգներու երգեցողութեամբ:

Ակումբին մուտքը զարդարուած էր Աթէնքի սկաուտ-արեւուշական խումբին կողմէ պատրաստուած սկաուտական փայտաչէն կամարով մը, իսկ հանդիսութեան սրահը՝ Աթէնքի երէցական փաղանգին կողմէ շինուած Հ.Մ.Ը.Մ.Ի Շուշանաձաղիկով:

Յայտագիրը սկսաւ Աթէնքի գայլիկարծուիկական վոհմակին Նոր Տարւան մաղթանքներու, երգի, պարի ներկայացումով եւ նուէրներու բաշխումով: Յաջորդեց Աթէնքի մըջնիկներու

ներկայացումը՝ «Սարինը եւ վիշապը» նիւթով: Ապա խօսքը տրուեցաւ Աթէնքի եւ Գոքինիոյ տեղական Սկաուտական Խորհուրդներու քոյրերուն՝ Մակի Հալլաճեանին եւ Սոֆիա Միքայէլեանին, որոնք փոխանցեցին իրենց վարչութիւններուն ողջոյնի խօսքերը:

Յայտագրի շարունակութեան, Գոքինիոյ մըջնիկները, գայլիկ-արծուիկներն ու սկաուտ-արեւուշները միասնաբար ներկայացուցին «Սքրուճը եւ իր մարդկային բարիքները», անցեալ ամրան հրդեհներու պատճառած փճացումէն ետք՝ բնութեան նուիրուած թատերախաղը: Մասնաճիւղին երէց-պարմանուհիները հոգացին թատերախաղին բեմական յարգարումը:

Օրուան նախագահ քոյր Գոհար Ալիանաքեանը հրաւիրեց Գոքինիոյ Սուրբ Յակոբ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Վարդ Ա. Քահանայ Յովսէփեանը՝ գաթան օրհնելու եւ իր մաղթանքները փոխանցելու:

Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Պօղոս Չոյաքեան խօսք առնելով ողջունեց ներկաները, ապա գաթան բաժնեց: Այնուհետեւ, ամրան հրդեհներուն Չախարոյի յոյն ժողովուրդին այցելած եւ օգտակար դարձած 11 քոյր-եղբայրներ պարգեւատրուեցան Հ.Մ.Ը.Մ.Ի Յունաստանի Շրջանային Վարչութեան յատուկ յուշանուէրներով: Պար-

գեւատրումը կատարեցին ներկայ Հ.Մ.Ը.Մ.ական վեթերան քոյրերն ու եղբայրները: Յուշանուէրներ ստացան եղբայրներ Օննիկ Աւագեան, Ալիա Տէր Արթինեան, Մարիլիկ Ժամկոչեան, Սիրվա Մանիկեան, Հուսիսիմէ Պէրպէրեան, Անոյ Փիլաֆեան, Մկրտիչ քոյրեր Անի Տէօքմէճեան, Հայկան Չաքմաքճեան եւ Լոռի Պարագեան:

Նաեւ, իր մարդասիրական մտածելակերպին ու վերաբերմունքին համար յուշատախտակով մը պարգեւատրուեցաւ Աթէնքի մասնաճիւղի երէց եղբ. Ճորճ Սելիմեանը:

Երկու մասնաճիւղերու անդամները միասնաբար երգեցին, յունական երգի մը երաժշտութեան հիմամբ, եղբ. Վիզէն Մինասեանի կողմէ հայերէն բառերու պատշաճեցումով կաղանդի երգ մը:

Հանդիսութեան աւարտին, վեթերան երկու եղբայրներ՝ Կարօ Աւագեան եւ Պերճ Գրիգորեան յայտնեցին իրենց մաղթանքները 2008ին համար եւ սկաուտական արժէքներու մասին փոխանցեցին իրենց խօսքերը: Օրուան գաթայի եւ զովացուցիչ խմիչքներու հիւրասիրութիւնը ստանձնած էին Աթէնքի եւ Գոքինիոյ Սկաուտական Խորհուրդներու քոյրերը:

Երեկոն փակուեցաւ աւանդական դրօշակի արարողութեամբ, «Յառաջ նահատակ» քայլերգով:



ՄԻՇՏ ԿԵՆՍՈՒՒՆԱԿ

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԼՄԵԼՈՅԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻՆ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐԻՆ

Թղթակից ԱԼՄԵԼՈ

Հոլանտայի մէջ Հ.Մ.Ը.Մ.Ի ներկայութիւնը արդէն 14 տարուան կեանք ունի: 1994ին կը հիմնուէր Հ.Մ.Ը.Մ.Ի Ալմելոյի մասնաճիւղը, նպատակ ունենալով իր շուրջ համախմբել գաղութին երիտասարդութիւնը՝ հայեցի առողջ դաստիարակութիւն ջամբելու համար անոնց:

Այսօր, Ալմելոյի մասնաճիւղը կը հաշուէ 131 անդամ, 38 սկաուտ եւ 52



Հ.Մ.Ը.Մ.Ի 9րդ Պատգամաւորական ժողովին Ալմելոյի պատգամաւոր եղբ. Յովհաննէս Յովհաննէսեան

մարզիկ: Ընդհանուր թիւ՝ 221: Մասնաճիւղին վարչութեան կողքին կը գործեն տիկնանց յանձնախումբ եւ մարզական յանձնախումբ: Անցնող տարի մասնաճիւղին վարչական կազմը կը բաղկանար եօթը քոյր-եղբայրներէ՝ Յասմիկ Օհանեան (ատենապետ), Նուպար Մարտիրոսեան (փոխ ատենապետ), Ասլան Ասլանեան (ատենադպիր), Յովհաննէս Օհանեան (փոխ ատենադպիր), Բաֆֆի Խաչատուրեան (գանձապահ), Նայրի Սեւտալեան (հաշուապահ) եւ Բաֆֆի Ամիրխանեան (խորհրդական):

Վարչութիւնը, իր յանձնախումբերով, ունեցաւ աշխոյժ գործունէութիւն. կազմակերպեց Միջինքի ընկերային հանդիպում, Զատիկուան պարահանդէս, «Մայրերու Օրը», դաշտազնացութիւն, պինկոյի երեկոյ, Նոր Տարուան առիթով փոքրիկներու ձեռնարկ եւ 2008ի Ս. Ծննդեան տօնին առիթով պարահանդէս:

Նշենք, որ մասնաճիւղը իր մասնակցութիւնը բերաւ Ապրիլ 24ի առիթով կազմակերպուած ցոյցին եւ ժողովրդա-

յին ոգեկոչման ձեռնարկին, Թուրքիոյ Եւրոպական Միութեան անդամակցութիւնը մերժող Պրիւքսէլի ցոյցին, Եւրոպայի հայկական միութիւններու երկրորդ համաժողովին եւ այլն:

Այսօր մասնաճիւղը ունի ֆուլթայլի երկու խումբ, որոնք կը մասնակցին Հոլանտայի ֆետերասիոնի մրցաշարքերուն: Աղջկանց հէնտպոլի խումբը այժմ կազմալոյժ վիճակ մը կը պարզէ: Կան նաեւ փինկ-փոնկ կիրարկող մարզիկներ: Բոլոր փորձերը կը կատարուին վարձու մարզասրահի մը մէջ:

Սկաուտական աշխատանքները կը կատարուին Կիրակի օրերը, յետմիջօրէի ժամը 2-4: Անցնող տարի, վարչութիւնը Սկաուտ. Խորհուրդին հետ կազմակերպեց սկաուտ նախկին պատասխանատուներու հաւաքոյթ մը:

Յատկանշական է, որ հինգ տարուան ակամայ ընդմիջումէ ետք, մասնաճիւղը 2007ին կատարեց իր 3րդ բանակումը, հինգ օրուան տեւողութեամբ (Այս մասին տեսնել «Մարզիկ»ի նախորդ թիւը, էջ 32):



Ալմելոյի սկաուտներ բանակումի պահուն:



«Երազ» պարախումբի մենակատարներ:



Եղբ. Յրաչ Սիսեռեան:

Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

Սեւան Նազարեան ՓԱՐԻՉ

Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի 2008ի ձեռնարկներու շարքին առաջինը եղաւ 12 Յունւարի երեկոյեան տեղի ունեցած տարեկան պահանգէսը:

Փարիզի «Մերիտիան» պանդոկի շքեղ սրահներուն մէջ աւելի քան 440 հոգի հաւաքուած էր Հ.Մ.Ը.Մ.-ի շուքին տակ միասնաբար գուարճանալու:

Քոքթէյլի շուրջ մտերմիկ հանդիպումներէ ետք, ժողովուրդը ուղղուեցաւ դէպի պարահանդէսի սրահ, որուն ճակատին զետեղուած էր Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի խորհրդանիշը, հայկական, ֆրանսական եւ սկաոտական դրօշակներով:

Ներկաներուն բարի գալուստի խօսքով ողջունեց Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութեան ատենապետ եղբ. Լեւոն Պաղտասարեան: Եղբայրը մատնանշեց, թէ 2008ը կը գուզադիպի Հ.Մ.Ը.Մ.-ի հիմնադրութեան 90ամեակին եւ այս տարւան բոլոր ձեռնարկները Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս նուիրած է անոր: Հակիրճ կեր-

պով եղբայրը ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի գործունէութեան ծիրը եւ սկաոտական ու մարզական աշխատանքները:

Ապա ան բեմ հրաւիրեց Կեդրոնական Վարչութեան Եւրոպայի ներկայացուցիչ եղբ. Յրաչ Սիսեռեանը: Եղբայրը ծանրացաւ Հ.Մ.Ը.Մ.-ի համահայկական կառոյց ըլլալու կարեւորութեան վրայ եւ շեշտեց անոր կատարած ազգանուէր աշխատանքը՝ փոքրերու եւ երիտասարդներու մօտ զօրացնել հայկական ոգին եւ սատարել հայապահպանման կարեւոր աշխատանքին, պատրաստելով վաղուան հայ մարդը:

Այնուհետեւ, բեմը յանձնուեցաւ «Կոմիտաս» նուագախումբին, որուն երգիչը՝ Յովսէփ իր բազմալեզու երգացանկով խանդավառեց ներկաները:

Երեկոյին անակնկալն էր փարիզեան շրջանի «Երազ» պարախումբի մենակատարներուն ելոյթը: Հայկական տարազներով երիտասարդ կատարողները հայկական պարեղանակներով մեծ խանդավառութիւն ստեղծեցին սրահէն ներս: Անոնց ելոյթը փակուեցաւ «Քոչարի»ով, որուն միացաւ սրահը:

Ամէն տարի Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութիւնը կը փորձէ վիճակահանութեան



Եղբ. Լեւոն Պաղտասարեան:

տոմսերուն տալ հայկական նկարագիր այս տարին եւս տարբեր չէր կրնար ըլլալ նախորդներէն, արդ՝ վաճառուող ապարանջաններն ու յիշատակի զարդերը կը կրէին Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի նշանը:

Երաժշտութիւն, պար, նուէր, անակրնկալ, մինչեւ առաւօտեան ժամեր պահեցին ներկաները սրահին մէջ: Ուշագրաւ երեկոյթ էր թարմացող համակիրներու ներկայութիւնը: Մեծ թիւով երիտասարդներ (մարզիկ, սկաոտ թէ համակիր) նոր շունչ բերած էին պարահանդէսին եւ յուսադրում՝ փորձառուներուն:



«ԱՅՍ ԱՂՈՒՈՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ԳԱՆՁԱՏՈՒՆԸ Հ.Մ.Ը.Մ.Ն Է»

Կ'ԸՍԷ ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ

Մարո Քէշիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

Չորեքշաբթի, 13 Փետրվար 2008ի երեկոյեան, Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղերու խմբապետական կազմերը, Տեառնընդառաջի նախատօնակին, աւանդական խարոյկը վառելէն ետք, համախմբուեցան Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահը, ուր Մուշեղ Արք. Մարտիրոսեանի գլխավորութեամբ, ընթրիքի սեղանին շուրջ մտերմիկ երեկոյ մը անցուցին: Առաջին անգամ ըլլալով, սեղանին ընկերացաւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ Երիտասարդաց Միութեան պատասխանատու կազմը:

Ուրախալի էր, որ երեկոյին մասնակցեցաւ նաեւ Սուրբն Արք. Գաթարոյեան, որ ներկաներու միասնական «Հայր Մեր»ի արտասանումէն ետք օրհնեց սեղանները:

Օրուան հիւրընկալն էր Կլէնտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգաբարձու թիւնը, որ լրիւ կազմով ներկայ էր, եկեղեցւոյ հովիւներուն հետ:

Բարի գալուստի խօսքերով ներկաները ողջունեց Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն Արտակ Քհնյ. Տէմիրճեան, որ առաջին հերթին երեկոն անուանեց Հ.Մ.Ը.Մ.ի եւ հոգեւորականներու հանդիպումի օր:

«Այսօր կը վայելենք այս գեղեցիկ երեկոն: Իբրեւ հայր եւ գաւակներ, համախմբուած ենք նոյն հոգիով, նոյն սիրով, ծառայութեան նոյն ոգիով մեր ծառայութիւնը մատուցելու մեր եկեղեցիին ու ազգին: Նաեւ, Հ.Մ.Ը.Մ.ը իբրեւ մեր կազմակերպութիւններու, միութիւններու ծիրէն ներս մաս կազմող ամբողջականութիւն, իր նուիրեալ ծառայութիւնը կը բերէ՝ մեր ազգի երիտասարդ սերունդին ջամբելով ազգասիրութիւն, հայասիրութիւն, հայրենասիրութիւն, եւ նաեւ կը կազմակերպէ կրօնական յատուկ դասընթացքներ՝ ստանալով համապատասխան կրօնա-

կան շքանշանը», ընդգծեց Քահանայ Հայրը եւ բոլորին շնորհակալութիւն յայտնեց ներկայութեան համար:

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան անունով ելոյթ ունեցաւ քոյր Մարո Քէշիշեան, որ ընդգծելով գեղեցիկ սովորութիւն դարձած այս ձեռնարկին նախաձեռնութիւնը՝ ներկաներուն վրատահեցուց, թէ Հ.Մ.Ը.Մ.ի սկառուական շարքերը ազգայինի կողքին մեծ կարեւորութեամբ կը ստանան նաեւ կրօնական դաստիարակութիւն:

«Կրօնական դաստիարակութիւնը միշտ գոյութիւն ունի սկառուական մեր աշխատանքներուն մէջ, որուն լաւագոյն փաստը կրօնական շքանշանն է, որ Ազգային Առաջնորդարանի կազմակերպութեամբ եւ մեր սիրելի Առաջնորդ Հօր ղեկավարութեամբ ամէն տարի կ'իրագործուի: Շատ գեղեցիկ երեկոյթ է այսօր տեսնել կրօնական դասը եւ մեր սկառուները մէկ սեղանի շուրջ եւ մանաւանդ՝ Աստուծոյ տան յարկին տակ, ուր կը հաղորդուին մեր բարձրա-



գոյն դաստիարակութեամբ՝ կրօնակա- նը եւ ազգայինը միատեղ», ըսաւ քոյրը եւ ներկայացուց Շրջանային Վարչու- թեան իր գործընկերները՝ Սթիւ Արթին- եանը (ատենապետ), Յովիկ Պետեւեանը (փոխ ատենապետ), Խաչիկ Խալաթեանն ու Անօ Մանսուրեանը: Ապա, ան հրաւի- րեց Շրջանային Ընդհ. Խմբապետ Հը- րայր Պոյաճեանը:

Եղբ. Պոյաճեան նախ ներկայացուց Շրջանային Սկառուտական Խորհուրդի իր գործակից քոյր-եղբայրները, որոնց կարգին էին Շրջանային խմբապետուհի Թային Հինտոյեան եւ Շրջանային փոխ խմբապետներ Մարուշ Տէյրմէնճեան եւ Արի Պոյաճեան: Ապա, ան խնդրեց սկառուտ պատասխանատուներէն ներ- կայացնել մասնակից մասնաճիւղերու խմբապետական կազմերը:

Այնուհետեւ, եղբայրը ընդգծեց կա- րեւորութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտական կեանքին, պատասխանատուութեան գիտակցութեան եւ յատկապէս հաւա- քական աշխատանքներու մասնակցու- թեան: Ան ուրախութեամբ յայտարա- րեց Հ.Մ.Ը.Մ.ի բանակավայրի սեփակա- նութիւնը եւ գայն երիտասարդութեան ի նպաստ օգտագործելու հրամայականը:

Սրտի իր խօսքը փոխանցեց նաեւ Հա- յաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ երիտասարդաց կազմերու ընդհանուր պատասխանատու պրն. Բաֆֆի Նալ- չայեանը: Ան լայն բացատրութիւններ տուաւ օրէ օր աշխուժացող եկեղեցա- կան կազմակերպութեան աշխատանք- ներուն մասին, Հ.Մ.Ը.Մ.ի ներկայ երի- տասարդութենէն խնդրեց գործակցիլ եւ քաջալերել իրենց գործունէութիւնը:

Օրուան խորհուրդը փոխանցեց Միւ-

ռոն Մ. Վրդ. Ազնիկեան: Բացատրելով Տեառնընդառաջի իմաստը, ան ըսաւ. «Տիրոջ երթալ, տիրոջ մօտենալ, հայու- թեան, մեր ստեղծիչին, Աստուծոյ, մեր փրկիչին, մեր արմատներուն, մեր մշա- կոյթին, մեր արժէքներուն երթալ է: Տեառնընդառաջը հայոց հին հեթանո- սական տօներէն մէկն էր, նուիրուած Միհր կամ Արամազդ աստուծոյ պաշ- տամունքին: Միհրը կը խորհրդանշէր արեւը, կրակը, կեանքը կը խորհրդանշէր, վերածաղկում, յարուսթիւն եւ յոյս կու տար: Միրոյ պաշտամունքի եւ կեանքի աղբիւր է արեւը»:

Հոգեւոր հօր եզրափակիչ բացատ- րութեամբ, Ս. Գրիգոր Լուսաւորիչի կողմէ քրիստոնէացուած այս տօնը՝ Տեառնընդառաջը «Դէպի Աստուած, դէպի Քրիստոս, դէպի Չերմութիւն եր- թալ եւ Քրիստոսը ընդունիլն է կեանքին մէջ: Ազգային մեր տօնն է ասիկա, մեր արմատներուն վերադարձի, դէպի մեր արժէքներուն երթալու, մեր հաւատքին, մեր պատմութեան: Դուք այն զինուոր- ներն էք, ապագայ այն սերունդը, որ վառ պիտի պահէք ջահը հաւատքի, հայ- րենիքի, մշակոյթի եւ հայութեան»:

Հոգաբարձութեան խօսքը փոխան- ցեց պրն. Ժիրայր Ղարախանեան: Ան շնորհակալութիւն յայտնեց այս գեղե- ցիկ հաւաքին կազմակերպման համար եւ կոչ ըրաւ ներկաներուն, որ Աստու- ծոյ հաւատքով ազգային մեր գործե- րուն առաջնահերթութիւն տան եւ միշտ եկեղեցի այցելեն:

Յայտագրին վերջին բաժնով Հայրա- կան իր պատգամն ու օրհնութիւնները փոխանցեց Մուշեղ Արք. Մարտիրոս- եան, որ բացատրելով երեկոյին նպա-

տակը հաստատեց. «Այս երեկոյին նպա- տակը Աստուծոյ օրհնքին հաւատարիմ հետեւորդներ ըլլալ, մեր ազգային ժա- ուանդութեան հարազատ ժառանգորդ- ները ըլլալ է: Եթէ երբեք մենք մեր կեանքին մէջ իբրեւ հայ ժողովուրդի գաւակներ, լաւ քրիստոնեայ եւ լաւ ազ- գայիններ կարենանք ըլլալ, Աստուծոյ մէ յուրիչ բան չենք ուզեր: Ես վստահ եմ, որ դուք բոլորը լաւ քրիստոնեայ էք եւ լաւ ազգայիններ»:

Ապա, Առաջնորդ Սրբազանը իր գո- հունակութիւնը յայտնեց, որ Ազգային Առաջնորդարանը եւ Հ.Մ.Ը.Մ.ը սերտ գործակցութեան մէջ են: Իսկ Հ.Մ.Ը.Մ.ի բանակավայրի գնումը ուրախա- լի երեւոյթ նկատելով, ան փափաք յայտնեց մատուռ մը կառուցել անոր մէջ, որպէսզի Աստուծոյ օրհնութիւնը անպակաս ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ին եւ բանա- կողներուն վրայէն:

Եզրակացնելով, Առաջնորդը շնոր- հակալութիւն յայտնեց Ս. Աստուածա- ծին եկեղեցւոյ հոգաբարձութեան՝ երե- կոյին հիւրընկալման համար եւ մաղ- թեց, որ յառաջիկայ տարի աւելի մեծ թիւով երիտասարդութիւն հիւրընկալէ:

Երեկոյին մթնոլորտէն խանդավառ- ւած, ներկայ հոգեւորականներուն զըլ- խաւորութեամբ, ներկաները խմբերգե- ցին ազգային կարգ մը երգեր:

Ձեռնարկը վերջ գտաւ ժամը 10ին, «Յառաջ նահատակ» քայլերգին յոտըն- կայս խմբերգումով:

Սուրբն Արք. Գաթարոյեան մթնո- լորտէն խանդավառուած՝ ոչ միայն «Պահպանիչ»ով եզրափակեց երեկոն, այլեւ՝ հետեւեալ գեղեցիկ հաստատումը կատարեց Հ.Մ.Ը.Մ.ին նկատմամբ. «Ինչ որ կորսնցնենք, անոր տեղը կրնանք բե- րել: Բայց մեր երիտասարդութիւնը չկորսնցնենք: Եւ այս աղուոր երիտա- սարդութեան գանձատունը Հ.Մ.Ը.Մ.ն է, որ կը պահէ, կը թրծէ, կը դաստիարա- կէ եւ ետ հայութեան կու տայ գայն»:

Ներկաները հոգեկան մեծ բաւարա- րութեամբ մեկնեցան տուն, իրենց հետ տանելով Ազգ. Առաջնորդարանի տրա- մադրած նուէրները՝ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Ս. Պատարագի խտասալիկն ու «Յիսուսի տաճար ընծա- յում»ը պատմող դրուագը:





82 ՄԱՐԶԱԿԱՆ ԽՈՒՄԲԵՐ ՄԱՍՆԱԿՅԵՅԱՆ Հ.Մ.Ը.Մ.Ի «ՍԵԻԱՆ» ՄԱՍՆԱԾԻԻՂԻ ՊԱՍՔԵԹՊՈՒԻ 23ՐԴ ՄԻՋ-ՄԱՍՆԱԾԻԻՂԱՅԻՆ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՆ



եղբ. Սթիվ Արթինեան, մարզական պատասխանատու եղբ. Ժանո Գահվեճեան, եղբայրներ Օշին Յարուլթիւնեան, Պերճ Պետոյեան, քոյրեր Սալբի Ճէճէեան եւ Անո Մանսուրեան:

Մրցաշարքին մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ.Ի Լոս Անճելըսի, Կլէնտէյլի «Արարատ», Սան Ֆեռնանտո Հովիտի «Մասիս», Փասատինայի «Ազատամարտ», Մոնթեպելլոյի, Օրէնճ Քաուլթիի «Սարդարապատ», Սանթա Գլարայի «Անի», Գրեհէնթա Հովիտի «Շանթ», Կլէնտէյլի «Սիփան», Լաս Վեկասի «Արցախ», Սան Ֆրանսիսքոյի, Տայմընտ Պարի «Արագ» եւ Սան Տիէկոյի «Սեւան» մասնաճիւղերէն 82 երկսեռ խումբեր, մանչերու ԱԱ., Ա-1, Ա-2, Ա-3 եւ Գ. դասակարգերէն, իսկ աղջիկներու Ա. դասակարգի մեծերու եւ փոքրերու խումբեր:

Շրջանային Մարզական Խորհուրդի երկար տարիներու գործավար եղբ. Սեւակ Կարապետեանի հաստատումով, «Մեծ յաջողութեամբ ընթացաւ մրցաշարքը եւ ի զարմանս բոլորին, առաջին անգամ ըլլալով նաեւ եղանակը մեծապէս նպաստեց մրցաշարքի յաջողութեան:

«Սան Տիէկոյի պասքեթպոլի այս մրցումները մասնաճիւղերուն եւ մանաւանդ խումբերուն համար ձեռով մը վերջին քննութիւնն էին տարուան մեծագոյն մրցումները նկատուող Նաւասարդեան մարզախաղերու մասնակցութեան համար:

«Այս տարի գեղեցիկ նորութիւններ կային եւ նոյնիսկ նոր չափանիշներ արձանագրուեցան թէ՛ աղջկանց եւ թէ՛ մանչերու մրցումներուն ընթացքին: Զտումի մրցումներուն, առաջին անգամ ըլլալով փոքր խումբեր մրցեցան իրենցմէ աւելի բարձր մակարդակի խումբերու դէմ եւ աննախընթաց ար-

Մարտ Զեչիշեան ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու մարզական կեանքէն ներս «Նախագահներու Օր»ուան նըւիրուած երկար շաբաթավերջը միշտ վերապահուած է Հ.Մ.Ը.Մ.Ի Սան Տիէկոյի «Սեւան» մասնաճիւղին: Այս շաբաթավերջին տեղի կ'ունենայ մասնաճիւղին մեծագոյն ձեռնարկը՝ պասքեթպոլի միջ-մասնաճիւղային մարզախաղերը, որոնք այս տարի բացառիկ յաջողութեամբ իրագործուեցան 16-18 Փետրուարին, «էլիւրնթ ինթըրնէշընը» համալսարանի վեց մարզադաշտերուն վրայ:

Հիասթափեց երեւոյթ էր տեսնել բազմահարիւր մարզիկ-մարզիկուհիներ, ծնողներ, մարզասէրներ եւ Հ.Մ.Ը.Մ.ական պատասխանատուներ մէկտեղուած հսկայական այն կեդրոնը, ուր

կարելիութիւնը ստեղծուած էր միաժամանակ հետեւելու զանազան մասնաճիւղերու միջեւ ընթացող վեց մրցումներու:

Պէտք է ընդունիլ, որ առաջին անգամ ըլլալով, եղանակը պայծառ էր, ինչ որ մեծապէս նպաստեց խումբերու մեծաթիւ մասնակցութեան:

Մրցումներու կազմակերպչական աշխատանքները բծախնդրութեամբ կատարեց մասնաճիւղին մարզական յանձնախումբը, գլխաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.ական ծանօթ մարզիկ եղբ. Րաֆֆի Վարժապետեանի:

Մարզախաղերու կազմակերպչական աշխատանքներուն մեծապէս օգտակար հանդիսացան եւ մրցաշարքին մօտէն հետեւեցան Շրջանային Մարզական քոյրեր Նայրիի Տէրտէրեան, Կասիա Մահսէրէճեան, եղբայրներ Սագո Գատէճեան եւ Խաթակ Քէչիշեան:

Հոն էին Շրջանային Վարչութեան անդամ-անդամուհիներէն ատենապետ



դիւնքներ արձանագրեցին: Յատկապէս մրցաշարքի աղջիկներու ամէնէն երիտասարդ խումբը՝ «Արարատ»(2) շահեցաւ պասքեթպոլի Ա. դասակարգի փոքրերու դասակարգին ախոյեանութիւնը»:

Մեծ գոհունակութեամբ արտայայտուեցաւ նաեւ Շրջանային Մարզական Խորհուրդի ատենապետուհի քոյր Նայիրի Տէրտէրեան, ըսելով, թէ «Այս տարի բացառիկ երեւոյթ էին Սան Տիէկոյի մարզախաղերը: 13 մասնաճիւղերէ պասքեթպոլի բարձր դասակարգի 800 մարզիկ-մարզիկուհիներ մասնակցեցան անոնց եւ երեք օրերու ընթացքին կատարեցին 180 մրցումներ, առանց միջադէպի: Այս երեւոյթը կը խրախուսէ մեզ եւ հպարտանալու գեղեցիկ առիթ կ'ընծայէ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին: Պէտք է ընդգծել, թէ ծնողները եւս մեծապէս նպաստեցին մրցաշարքին յաջողութեան: Իրենց զաւակներուն եւ Հ.Մ.Ը.Մ-ին հանդէպ իրենց ունեցած սիրոյն,



անոնք ամբողջ շաբաթավերջը իրենց զաւակներուն ընկերակցելով, ներկայ գտնուեցան մրցաշարքին: Բարձր դասակարգի խումբերուն համար այս տարուան վերջըներ մրցաշարքն է: Յաջողը՝ Նաւասարդեան մարզախաղերն են, որոնց նախապատրաստական աշխատանքներուն սկսած ենք արդէն»:

այս մարզախաղերը անգամ մը եւս մեծ ոգեւորութիւն ստեղծեցին ոչ միայն մրցող խումբերուն միջեւ, այլ նաեւ՝ տեղւոյն փոքրաթիւ հայ գաղութին մէջ, որ ամբողջութեամբ ոտքի ելած հրճուանքով հետեւեցաւ մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ-ական մեղուափեթակի վերածելով «էլիւնթ ինթըրնէշնըլ» համալրասարանի այս կարեւոր անկիւնը:

23րդ տարին ըլլալով կազմակերպուած պասքեթպոլի միջ-մասնաճիւղային

ՄԱՐԶԱՆԱՂԵՐՈՒՄՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

ԱԱ. ԴԱՍԱԿԱՐԳ - ՄԱՆՉԵՐ

- 1.- Հ.Մ.Ը.Մ-ի Լոս Անճելըս(1) մասնաճիւղ
- 2.- Հ.Մ.Ը.Մ-ի «Արարատ» մասնաճիւղ
- 3.- Հ.Մ.Ը.Մ-ի Լոս Անճելըս(2) եւ Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղեր

Ա-1 ԴԱՍԱԿԱՐԳ - ՄԱՆՉԵՐ

- 1.- Հ.Մ.Ը.Մ-ի Մոնթեպելլօ մասնաճիւղ
- 2.- Հ.Մ.Ը.Մ-ի Կլէնտէյլի «Արարատ»(1) մասնաճիւղ
- 3.- Հ.Մ.Ը.Մ-ի Լոս Անճելըս(1) եւ Օրէնճ Քառնթիի «Սարդարապատ»(1) մասնաճիւղեր

Ա-2 ԴԱՍԱԿԱՐԳ - ՄԱՆՉԵՐ

- 1.- Հ.Մ.Ը.Մ-ի Սանթա Գլարայի «Անի» մասնաճիւղ
- 2.- Հ.Մ.Ը.Մ-ի Գրեսէնթա Հոլիտի «Շանթ»(3) մասնաճիւղ
- 3.- Հ.Մ.Ը.Մ-ի Փասատինայի «Ազատամարտ» եւ Սան Ֆեռնանտօ Հոլիտի «Մասիս»(2) մասնաճիւղեր

Ա-3 ԴԱՍԱԿԱՐԳ - ՄԱՆՉԵՐ

- 1.- Հ.Մ.Ը.Մ-ի Կլէնտէյլի «Արարատ»(3) մասնաճիւղ
- 2.- Հ.Մ.Ը.Մ-ի Օրէնճ Քառնթիի «Սարդարապատ»(1) մասնաճիւղ
- 3.- Հ.Մ.Ը.Մ-ի Կլէնտէյլի «Արարատ»(1) եւ (2) մասնաճիւղ

Ա. ԴԱՍԱԿԱՐԳ - ԱՂՋԻԿՆԵՐ (Մեծեր)

- 1.- Հ.Մ.Ը.Մ-ի Սան Ֆեռնանտօ Հոլիտի «Մասիս» մասնաճիւղ
- 2.- Հ.Մ.Ը.Մ-ի Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղ

Ա. ԴԱՍԱԿԱՐԳ - ԱՂՋԻԿՆԵՐ (Փոքրեր)

- 1.- Հ.Մ.Ը.Մ-ի Կլէնտէյլի «Արարատ»(2) մասնաճիւղ
- 2.- Հ.Մ.Ը.Մ-ի Լոս Անճելըս մասնաճիւղ
- 3.- Հ.Մ.Ը.Մ-ի Կլէնտէյլի «Արարատ»(1) եւ Մոնթեպելլօյի մասնաճիւղեր

Գ. ԴԱՍԱԿԱՐԳ - ՄԱՆՉԵՐ (Upper)

- 1.- Հ.Մ.Ը.Մ-ի Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղ
- 2.- Հ.Մ.Ը.Մ-ի Գրեսէնթա Հոլիտի «Շանթ»(1) մասնաճիւղ
- 3.- Հ.Մ.Ը.Մ-ի Մոնթեպելլօյի եւ Կլէնտէյլի «Արարատ»(1) մասնաճիւղեր

Գ. ԴԱՍԱԿԱՐԳ - ՄԱՆՉԵՐ (Lower)

- 1.- Հ.Մ.Ը.Մ-ի Սան Ֆեռնանտօ Հոլիտի «Մասիս»(1) մասնաճիւղ
- 2.- Հ.Մ.Ը.Մ-ի Փասատինայի «Ազատամարտ»(2) մասնաճիւղ
- 3.- Հ.Մ.Ը.Մ-ի Փասատինայի «Ազատամարտ»(1) եւ Գրեսէնթա Հոլիտի «Շանթ»(1) մասնաճիւղեր



Հ.Մ.Ը.Մ.Ի ՓԱՍԱՏԻՆԱՅԻ «ԱԳԱՏԱՄԱՐՏ» ՄԱՍՆԱԾԻԴԻՆ ՅՈՒՄԵԱԿԻ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻԲԻՆԸ

ՍՕՍԻ ԽԱԶԻԿԵԱՆ 100,000 ՏՈՒԱՐ ՆՈՒԻՐԵՑ ՄԱՄՆԱԾԻԴԻ ԿԵԴՐՈՆԻ ՖՈՆՏԻՆ,
Ի ՅԻՇԱՏԱԿ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԱՄՈՒՄՆՈՅՆ՝ ՆՇԱՆ ԽԱԶԻԿԵԱՆԻ

Մարո Քեչիշեան ԼՈՍ ԱՆՃԵԼՍ

2 007 ը հանդիսացաւ Հ.Մ.Ը.Մ. Փաստօրինայի մասնաճիւղի հիմնադրութեան 30ամեակը: Մասնաճիւղը տարուան բոլոր ձեռնարկները նուիրեց այս կարեւոր իրադարձութեան, որ եզրափակուեցաւ Շաբաթ, 27 Հոկտեմբեր 2007ի երեկոյեան, ճաշերոյթ-պարահանդէսով մը, մասնակցութեամբ մեծ թիւով Հ.Մ.Ը.Մ. ասէրներու: Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանը կը ներկայացնէր Փաստօրինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Քհնյ. Պապօշեան: Հոն էին Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան անդամներ եղբ. Խաչիկ Խալաթեան, Պերճ Պետրոսեան եւ Օշին Յարութիւնեան, Ազգային Վարչութեան անդամներ Ներսէս Մելքոնեան եւ Խաթակ Տիբեհեան, Համազգայինի Շրջանային Վարչութեան ատենապետ դոկտ. Վիգէն Եագուպեան, Հ.Յ.Գ. «Լեռնավայր» կոմիտէի ներկայացուցիչ Կարո Մոմճեան, շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու եւ Փաստօրինայի քոյր կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, Հ.Մ.Ը.Մ.ականներ, համակիրներ եւ բազմաթիւ հիւրեր:

Հպարտալի էր նաեւ ներկաներուն մէջ տեսնել մասնաճիւղի անցեալի ֆուլթայրի լաւագոյն մարզիկներէն եղբ. Եուրա Մեսրոպեանը, որ ներկայիս ֆուլթայրի լաւագոյն մարզիկներէն է



Ետեւայի Սոլթ Լէյք քաղաքի M.L.S. խումբին: Ժամը 7.30 - 8.30 տեղի ունեցող հիւրասիրութենէն ետք, մասնակիցները հիւրընկալուեցան սրահ, ուր գործադրուեցաւ պաշտօնական յայտագիր մը: Ձեռնարկին հանդիսավարութիւնը կատարեց մասնաճիւղի երկարամեայ գործունեայ անդամներէն եղբ. Սաքօ Կարապետեան, որ առաջին հերթին հրաւիրեց ներկաները յոտնկայս ունկնդրելու Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգները: Ապա, ներկաները վայրկեան մը յոտնկայս յարգեցին յիշատակը մասնաճիւղէն յաւէտ բաժնուած հիմնադիր եւ գործող անդամ-անդամուհիներուն եւ յատկապէս վերջերս մահացած եղբ. Յակոբ Պոսնոյեանին: Սեղանները օրհնեց եւ ապա Թեմին Առաջնորդ Հօր օրհնութեան խօսքը ընթերցեց Քհնյ. Պապօշեան: Սրբազան

Հայրը կը մաղթէր, որ երեք տասնամեակ առաջ Փաստօրինայի մէջ սկիզբ առած Հ.Մ.Ը.Մ.ական երթը շարունակուի աննահանջ եռանդով եւ նորանոր նուաճումներ արձանագրէ: «Հ.Մ.Ը.Մ.ը հայ կեանքին մէջ կենսունակութիւնն ենք միութիւնն է: Անոր հիմնական առաքելութիւնը եղած է ու կը մնայ հայ պատանիին ու երիտասարդին մարմինն ու միտքը հաւասարապէս հարստացնել մարդկային ու ազգային արժէքներով ու աւանդներով: «Հ.Մ.Ը.Մ.ի «Ազատամարտ» մասնաճիւղի հիմնադիրները ծանօթ են Հ.Մ.Ը.Մ.ի «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանին, զոր պէտք է հասցնել հոն, ուր հայկական կամք ու հաւաքական կեանք կայ, հոն ուր հայ պատանին ու երիտասարդը կարիքը ունի հաղորդակից դառնալու հայկական ու Հ.Մ.Ը.Մ.ական աւանդութիւններուն: Հ.Մ.Ը.Մ.ի «Ազատամարտ» մասնաճիւղը եղաւ Փաստօրինայի հայ գաղութին

ԱՅՍ ԷՋՐ ԿԸ ՀՈՎԱՆԱԴՈՐԷ Հ.Մ.Ը.Մ.Ի ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԱՍՆԱԾԻԴԸ



Օրուան հանդիսավար եղբ. Սագո Կարապետեան:



Շրջ.Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Խաչիկ Խալաթեան:

կեանքը այս աւանդներով ու այս տեսլականով սնող միտքը: Կեանքը կերտուեցաւ անհուն գոհաբերութեամբ ու անշահախնդիր աշխատանքով: Եւ այսօր, երբ այս մասնաճիւղը մեզի կը ներկայանայ 30 տարիներու վաստակով ու հարուստ փորձառութեամբ, վստահ ենք, որ այս բոլորը յառաջիկային սպաս պիտի դրուին նոյն յարկին տակ հաւաքուող հայ պատանիին ու պարմանուիին եւ Զ.Մ.Ը.Մ.ական դրոշարշաւը պիտի շարունակուի նոյն թափով: Թող Աստուած օրհնէ Զ.Մ.Ը.Մ.ի «Ազատամարտ» մասնաճիւղին երթը: Վարձահատոյց ըլլան բոլոր նուիրեալ Զ.Մ.Ը.Մ.ականները եւ Ս. Խաչը իր հովանին պահէ անոնց աշխատանքին վրայ», կ'ըսէր Առաջնորդ Սրբազանը իր օրհնութեան խօսքին մէջ:

Ընթրիքէն ետք, օրուան հանդիսավար եղբ. Սագո Կարապետեան ձեռնարկի կազմակերպիչ յանձնախումբին անունով ողջունեց ներկաները, ներկայացուց օրուան պաշտօնական հիւրերը եւ ընդգծեց. «Երեսուն տարիներ առաջ, երբ այս մասնաճիւղը հիմնուեցաւ, մեր հիմնադիրներուն իտէալն էր թուական աճ արձանագրել եւ սեփական մարզադաշտ ունենալ: Այսօր, երեսուն տարիներ ետք, հոս ներկայացած ենք ձեզի յայտարարելու, թէ այդ երազը

իրականացած է եւ մենք պատրաստ ենք գործակցելու եւ մեր սեփական կեդրոնը ունենալու, որպէսզի մեր շարքերը աւելի աճին ու բազմանան»:

Եղբայրը յատուկ շնորհակալութիւն յայտնեց Հ.Յ.Դ. «Լեռնավայր» կոմիտէին, որ երեսուն տարիներէ ի վեր հայ կեդրոնը կը տրամադրէ Հ.Մ.Ը.Մ.ին, ան միաժամանակ խոստացաւ, որ շուտով մասնաճիւղը իր ամբողջական ծրագիրը կ'ունենայ կեդրոնի մը մասին:

Մասնաճիւղին վարչութեան ողջոյնի խօսքը փոխանցեց ատենապետ եղբ. Միսաք Թաթիկեան: Ան իր հերթին բարի գալուստ մաղթելէ ետք ներկաներուն, ըսաւ. «Հայրենիքէն հեռու, մեր ժողովուրդի կեանքին մէջ Զ.Մ.Ը.Մ.ը այն լիակատար միութիւնն է, ուր մեր երիտասարդները՝ մարզիկներ եւ սկաուտներ, իբրեւ տոկուն, կարգապահ եւ պատասխանատու հայեր, կու գան մեր դրօշը բարձր պահելու: Այսօր, աւելի քան 700 անդամ կը հաշուէ մեր մասնաճիւղը, ունինք աւելի քան 30 մարզական երկսեռ խումբեր, առաւել սկաուտական արի եւ արեւոյշներու միաւորներ: Վարչութիւնս, նախորդ վարչութիւններու նման, միշտ կ'աշխատի նիւթապէս եւ բարոյապէս թեւ ու թիկունք կանգնիլ նոր սերունդին: Այսօր հպարտութեամբ կու գանք ըսելու, թէ յաջողած ենք մեր առաքելութեան մէջ»: Եղբ. Թաթիկեան համոզուածով վստահեցուց ներկաները, որ մասնաճիւղի անդամ-անդամուհիներուն, ծնողներուն, բարեկամներուն եւ բարերարներուն աջակցութեամբ իրականութիւն պիտի դառնայ մասնաճիւղը սեփական մարզադաշտով մը օժտելու երազը:

Շրջանային վարչութեան անունով շնորհաւորանքներ փոխանցեց մասնաճիւղին մօտ Շրջանային վարչութեան ներկայացուցիչ եղբ. Խաչիկ Խալաթեան:

«Երեսուն տարիների ընթացքում «Ազատամարտ» մասնաճիւղը արձանագրել է գերազանց յաջողութիւններ: Այս առիթով շնորհաւորում եմ այն անդամներին,



Շրջանային վարչութեան եղբայրներ յորելեար մասնաճիւղի ներկայացուցիչին կը փոխանցեն յուշանուէր մը:

ԱՅՍ ԷՋՐ ԿԸ ՀՈՎԱՆԱԲՈՐԷ Զ.Մ.Ը.Մ.Ի ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԱՍՆԱԾԻՂԸ



որոնք տարիների ընթացքին մասնակցել են մասնաճիւղի աշխատանքներին: Եւ նաեւ դուք սիրելի ծնողներ, հովանավորներ եւ նուիրատուներ, այս երկար տարիներին միշտ մեզի հետ էք եղել եւ չէք խնայել ձեր օժանդակութիւնն ու նուիրատուութիւնները այս մասնաճիւղին: Եւ ահա այսօր, կարող ենք միասնաբար մի քայլ վերցնել իրականացնելու մասնաճիւղին սեփական կեդրոնը, որ ոչ միայն պատիւ է Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղին, այլ նաեւ՝ Փասատինայի գաղութին», *ըսաւ եղբայրը:*

Ապա, եղբայրը, Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Պերճ Պետոյեանի ընկերակցութեամբ, մասնաճիւղին 30ամեայ բեղուն գործունէութիւնը յատկանշող յուշանուէր մը յանձնեց յոբելեար մասնաճիւղին:

Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղին անունով շնորհակարարական յուշանուէր մը յանձնեց նաեւ ատենապետ եղբ. Գառնիկ Աբրահամեան:

Յուշադրուեցաւ մասնաճիւղին 30ամեայ գործունէութիւնը ներկայացրնող տեսաերիզ մը, որ մեծապէս սպաւորեց եւ քաղցր յիշատակներ արթնցուց շատերուն մօտ:

Այնուհետեւ, մասնաճիւղին վարչութիւնը յատուկ յուշանուէրներով պարգեւատրեց մասնաճիւղին 30ամեակը հովանավորող երեսուն «կնքահայր-կնքամայր»երը (Յանկը տեսնել առանձին):

Քէֆը շարունակուեցաւ երգիչ Սաբոյի եւ իր նուագախումբին հետ:

Այնուհետեւ տեղի ունեցաւ գեղեցիկ անակնկալ մը: Տիկ. Սօսի Խաչիկեան 100 հազար տոլար նուիրեց Հ.Մ.Ը.Մ.ի «Ազատամարտ» մասնաճիւղի կեդրոնի ֆոնտին, ի յիշատակ հանգուցեալ ամուսնոյն՝ Նշան Խաչիկեանին: Այս առիթով բեմ հրաւիրուեցաւ Խաչիկեան գերդաստանը, որուն անդամները տեղւոյն վրայ մասնաճիւղին վարչութեան յանձնեցին խոստացուած վճարագիրը:

Իշխանական այս նուիրատուութիւնը բարձր գնահատուեցաւ ներկայներուն կողմէ, որոնք յոտնկայս եւ երկարաշունչ ծափողջոյններով գնահատեցին նուիրատուութիւնը: Իր հերթին, մասնաճիւղին վարչութիւնը յատուկ յուշանուէրով եւ ծաղկեփունջով իր երախտագիտութիւնը յայտնեց տիկ. Խաչիկեանի:

Պաշտօնական յայտագրի աւարտէն ետք, ստեղծուած ուրախ մթնոլորտը աւելի ճոխացուցին երգիչ Սաբոն եւ իր նուագախումբը: Ներկաները տօնական երեկոյ մը ապրեցան եւ մեծ խանդավառութեամբ երկար ժամեր պարեցին: Հ.Մ.Ը.Մ.ական մթնոլորտը բացայայտ էր: Օրուան նուաճումը՝ նոր կեդրոնի երազի իրականացման նախաքայլերն էին, որոնք վստահաբար միասնական ջանքերով իրականութիւն պիտի դառնան անպայման:

30ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԽՄՈՒԹԵԱՆ 30 «ԿՆՔԱՅԱՅՐ-ԿՆՔԱՄԱՅՐ»ԵՐԸ

- Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգնոր Ծրջանային Վարչութիւն
- Հ.Յ.Դ. «Լեռնավայր» Կոմիտե
- Փասատինայի Ս. Սարգիս Եկեղեցի
- Տէր եւ տիկ. Գրիգոր եւ Ռիթա Ապաճեան
- Տէր եւ տիկ. Ժիրայր եւ Սեդա Պաղպուտարեան
- Տէր եւ տիկ. Պերճ եւ Զրիստին Պետոյեան
- Տէր եւ տիկ. Յովիկ եւ Մայտա Պեհեսիլեան
- Տէր եւ տիկ. Յովսէփ եւ Էլիզապէթ Պոյաճեան
- Տէր եւ տիկ. Ճոնի եւ Ռիթա Տապապաղեան
- Տէր եւ տիկ. Շահան եւ Անի Տէր Օհաննեսեան
- Տէր եւ տիկ. Վարուժ եւ Ժանէթ Տէրտերեան
- Տէր եւ տիկ. Սագօ եւ Սիմա Կարապետեան
- Տէր եւ Տիկ. Արա եւ Անի Ղանիմէ
- Տէր եւ տիկ. Բաֆֆի եւ Սոֆիա Յարութիւնեան
- Տէր եւ տիկ. Շանթ եւ Վերժին Զայթայեան
- Զոյր Փերուզ Յարութիւնեանի կողմէ եղբոր՝ Յարութիւն Յարութիւնեանի յիշատակին
- Տէր եւ տիկ. Յակոբ եւ Լույս Գարապիպերճեան
- Տէր եւ տիկ. Արթիւր եւ Լուսինէ Զարոճեան
- Պրն. Պերճ Գասպարեան
- Տէր եւ տիկ. Արա եւ Արաքսի Գագանճեան
- Պրն. Բաֆֆի Զէնտերեան
- Տէր եւ տիկ. Ճաքս եւ Թամար Խաչատուրեան
- Տէր եւ տիկ. Արա եւ Սիլվա Խաչիկեան
- Տէր եւ տիկ. Վիգէն եւ Սալբի Լապպատ
- Տէր եւ տիկ. Ստեփան եւ Մարալ Նազարեան
- Տէր եւ տիկ. Զրանդ եւ Մարալ Շիրտըմեան
- Տէր եւ տիկ. Փօլ եւ Գլարա Սիփիլեան
- Պրն. Տիգրան Թաշճեան
- Տէր եւ տիկ. Պետիկ եւ Սալբի Թաշճեան
- Պրն. Միսաք Թաթիկեան
- Տէր եւ տիկ. Սարգիս եւ Էլիզապէթ Թաթիկեան
- Անուշավաճառ Վրեժ

կարաշունչ ծափողջոյններով գնահատեցին նուիրատուութիւնը: Իր հերթին, մասնաճիւղին վարչութիւնը յատուկ յուշանուէրով եւ ծաղկեփունջով իր երախտագիտութիւնը յայտնեց տիկ. Խաչիկեանի:

նուագախումբը: Ներկաները տօնական երեկոյ մը ապրեցան եւ մեծ խանդավառութեամբ երկար ժամեր պարեցին: Հ.Մ.Ը.Մ.ական մթնոլորտը բացայայտ էր: Օրուան նուաճումը՝ նոր կեդրոնի երազի իրականացման նախաքայլերն էին, որոնք վստահաբար միասնական ջանքերով իրականութիւն պիտի դառնան անպայման:

ԱՅՍ ԷՋՐ ԿԸ ՀՈՎԱՆԱԻՈՐԷ Հ.Մ.Ը.Մ.Ի ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԱՍՆԱԾԻԻՂԸ



Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԱՍ ՎԵԿԱՍԻ «ԱՐՑԱԽ» ՄԱՍՆԱԾԻԴԸ ՄԵԾ ՇՈՒՔՈՎ ՆՇԵՑ ԻՐ ՀԻՄՆԱԴԻՐՈՒԹԵԱՆ 10ԱՄԵԱԿԸ



Պարգևատրուող անցեալի վարչակազմի անդամները Շրջանային Վարչութեան անդամներուն հետ:

Թղթակից ԼԱՍ ՎԵԿԱՍ

Երբ, 27 Հոկտեմբեր 2007 ը անմոռանալի երեկոյ մը եղաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Լաս Վեկասի «Արցախ» մասնաճիւղին համար: Երջանի Հ.Մ.Ը.Մ.Ի ընտանիքը մեծ շուքով նշեց մասնաճիւղին հիմնադրութեան 10ամեակը, տեղւոյն «Տեզըթ ուիլով կոլֆ քուրս» սրահին մէջ:

Ցատկանշական այս տարեդարձին մասնակից դառնալու ոգեւորութեամբ սրահ փութացած էին բազմաթիւ հայրերը, քոյր կազմակերպութիւններու ներկայացուցիչներ: Հոն էին մասնաճիւղի մօտ Արեւմտեան Մ. Նահանգներու Երջանային Վարչութեան ներկայացուցիչներ՝ փոխ ատենապետ եղբ. Յովիկ Պետեւեան եւ քոյր Մարո Քէշիշեան, մասնաճիւղին անցեալի վարչակազմի, ծնողներ, հիւրեր, Հ.Մ.Ը.Մ.Վականներ եւ

բազմաթիւ համակիրներ: Երեկոն կը յատկանշուէր երիտասարդութեան զգալի ներկայութեամբ:

Ժամը 7-8 տեղի ունեցող հիւրասիրութենէն ետք, ներկաները առաջնորդուեցան սրահ:

Ձեռնարկին պաշտօնական բաժինը սկիզբ առաւ դրօշակի արարողութեամբ, զոր կատարեցին մասնաճիւղին արի-արենոյճները, գայլիկ-արծուիկներու ընկերակցութեամբ, սրահ ներկայացնելով Մ. Նահանգներու, Հայաստանի, Նեւատայի եւ Հ.Մ.Ը.Մ.Ի դրօշները, համոզումով արտասանեցին քաղաքացիի իրենց երզումը, խմբերգեցին Հայաստանի քայլերգը եւ ապա դրօշները զետեղեցին բեմին առջեւ:

Սեղանները օրհնեց պատուելի դոկտ. Գեղամ Թաշեան: Ան առաջին հերթին փառք տուաւ Աստուծոյ, որ իր օրհնութեամբ, անցնող տասը տարիներուն «Արցախ» մասնաճիւղը ծառայեց իր ազգին, դաստիարակելով հայ երիտասարդութիւնը թէ՛ ընկերային եւ թէ՛ վարչա-

կան մարզերէն ներս: Ան վստահեցուց, որ այնքան ատեն, որ մեր երիտասարդութեան դաստիարակութեամբ զբաղող նուիրեալ առաջնորդներ ունինք, հայ ազգը պիտի գոյատեւէ:

Ընթրիքին ընթացքին, սահիկներու ցուցադրութեամբ ներկայացուեցան մասնաճիւղին 10ամեայ գործունէութիւնը եւ արձանագրած յաջողութիւնները, որոնք մեծապէս յուսադրեցին ներկաները:

Ընթրիքէն ետք գործադրուեցաւ պաշտօնական կոկիկ յայտագիր մը: Օրւան հանդիսավարութիւնը ձեռնհասօրէն կատարեց քոյր Սարիկ Արմէնեան-Լիպարեան, որ բարի գալուստ մաղթելէ ետք ներկաներուն, մատնանշեց. «Այսօր կը տօնախմբենք տասը տարուան տքնաջան աշխատանքի հպարտալի արդիւնքը, տասը տարուան հայկական ոգիի տիրապետումը եւ մանաւանդ տասը տարուան Հ.Մ.Ը.Մ.ի գոյութիւնը Լաս Վեկասի մէջ»: Ապա, ան հրաւիրեց ատենապետուհի քոյր Նորա Արմէնեանը, փոխանցելու մասնաճիւղին վարչութեան պատգամը:

«Այսօր շնորհակալութեան, երախտագիտութեան օր է մեզի համար, որովհետեւ շրջանի «Արցախ» մասնաճիւղը տասնամեակ մը բոլորեց, ի պատիւ անցեալի եւ ներկայի իր ղեկավարներուն, սկառուտական եւ մարգական շարքերուն եւ մանաւանդ տեղւոյն հայկական գաղութի զօրակցութեան, բաջալերանքին եւ գործակցութեան: Այսօր շնորհակալութեան առնթերնաւի հպարտ ենք արձանագրուած տասնամեայ յաջողութիւններուն համար: Այսուհանդերձ, դեռ երկար ճամբայ ունինք կտրելիք», ըսաւ քոյրը: Ապա, ան շնորհակալութիւն յայտնեց եւ ներկայացուց գործող վարչական կազմը, յանձնեալ Ազնիւ Գասաւանեանի, Ռազմիկ Լիպարեանի, Վիգէն Սարխան-



եանի եւ Նորա Շիրանեանի: Քոյրը նաեւ առանձնաբար շնորհակալութիւն յայտնեց Տայան Սուսանիին, Շաբէ Տորմայեանին, Նինա Կանաչեանին, Արշօ Եղիայեանին, Սեդա Գասամանեանին եւ բոլոր անոնց, որոնք մեծապէս օգտակար հանդիսացան ձեռնարկին յաջողութեան:

Այնուհետեւ, քոյրը գեղեցիկ անակընկալով մը բեմ հրաւիրեց եւ մասնաճիւղին անունով երախտագիտական հաստատագիրներ յանձնեց քոյր Մարօ Քէշիշեանին՝ մասնաճիւղին յարատեւ օգտակար հանդիսանալուն համար, եւ Հայտի Գասամանեանին, որ միշտ օգնութեան ձեռք կ'երկարէ մասնաճիւղին, հարթելով շատ մը դժուարութիւններ:

Շրջանային Վարչութեան անունով ելոյթ ունեցաւ քոյր Մարօ Քէշիշեան, որ շնորհաւորելով մասնաճիւղին տասնամեայ գործունէութիւնը ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ.ի Լաս Վեկասի «Արցախ» մասնաճիւղը անցնող տասը տարիներուն ընթացքին վստահաբար դժուարութիւններու եւ արգելքներու հանդիպեցաւ: ...Նման քաղաքի մը մէջ կազմակերպութիւն ունենալը եւ յարատեւելը, մանաւանդ Հ.Մ.Ը.Մ.ի պէս երիտասարդական կազմակերպութիւն մը պահելը դժուար է եւ մեծ ջանքի ու զոհողութեան կը կարօտի: Այս յաջողութիւնը մենք կը պարտինք ո՛չ միայն վարչական կազմերուն, այլ նաեւ՝ շրջանի հայութեան եւ յատկապէս այսօր ներկայ հաւատացեալ Հ.Մ.Ը.Մ.ականներուն, որոնց համար մեծապէս շնորհակալ ենք», ըսաւ քոյրը եւ առիթը պատեհ նկատելով հրաւիրեց Շրջանա-



յին Վարչութեան փոխ ատենապետ եղբորդի Պետեւեանը, որ շնորհաւորական յուշանուէր մը յանձնեց վարչութեան, աշխատանքի առաւել կորով մաղթելով մասնաճիւղին:

Այնուհետեւ, գնահատագիրներ յանձնուեցան անցեալի բոլոր վարչական քոյր-եղբայրներուն, որոնք անսակարկ նուիրումով ծառայած են մասնաճիւղին վերելքին:

Գնահատանքի յուշանուէրներ յանձնուեցան նաեւ մասնաճիւղի պատրաստողի մանչերու Ա. խումբի եղբայրներուն, որոնք ներկայիս կը մասնակցին Թարխանեան Ակադեմիայի պատրաստողի մրցաշարքին եւ ցարդ չեն պարտուած:

Յայտագրին վերջին բաժինով տեղի ունեցաւ մասնաճիւղին 10ամեակը խորհրդանշող մոմավառութիւնը, զոր կատարեցին Արմէն Անոյշեան, Կարապետ Պետրեան, Փիրայր Տորմայեան, Օշին Յարութիւնեան, Տիրան Զըպլեան, Հայ-

տի Գասամանեան, Բաֆֆի Խաչատուրեան, Արամ Քուլթնուեան, Թորոս Սուսանի եւ Վարուժ Եոզղաթեան:

«Կնքահայր-Կնքամայր»երը ուրախ մթնոլորտի մէջ կտրեցին նաեւ մասնաճիւղին 10ամեակի կարկանդակը:

Պաշտօնական յայտագրի աւարտէն ետք, երեկոն խանդավառեց Լուս Անճելըսէն յատկապէս հրաւիրուած երգիչ Ներսիկ Իսպիրեան, որ ժողովրդային եւ էսդերատային իր երգերով անմոռանալի պահեր պարգեւեց ամբողջ գիշերը պարող մասնակիցներուն:

Ըստ սովորութեան, ձեռնարկին վերջին բաժինով սիրելի երգիչը հմայեց ներկաները եւ յատկապէս երիտասարդութիւնը՝ իր ազգային-յեղափոխական երգերով, որոնց ընկերակցեցան նաեւ ներկաները:

Ստեղծուած ուրախ մթնոլորտէն խանդավառուած, եղան սրտաբուխ նուիրատուութիւններ: Տեղի ունեցաւ նաեւ վիճակահանութիւն:

Ներկաները, ուշ գիշերին, դժուարութեամբ մեկնեցան սրահէն, հայկականութեամբ վերանորոգուած եւ Հ.Մ.Ը.Մ.ական ոգիով լեցուած:

Շնորհաւորելի է «Արցախ» մասնաճիւղին 10ամեակը, այդ տասնամեակին ընթացքին մասնաճիւղը կանգուն պահող բոլոր անդամ-անդամուհիները եւ մասնաճիւղին զօրացման նպաստողները: Յատկապէս գովելի է ձեռնարկին մասնակցող Հ.Մ.Ը.Մ.ական երիտասարդութիւնը, որոնցմէ կ'ակնկալուի համախմբուած մնալ Հ.Մ.Ը.Մ.ին շուրջ եւ նորանոր նուաճումներով հարստացընել մասնաճիւղը:





«ՀԱՅ ՍԿԱՌԻՏԻ ՕՐ»ՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒՆ ՈՒՂՂԱԾ ԻՐ ԽՕՍՔԻՆ ՄԷՁ՝

«Հ.Մ.Ը.Մ.Ը ՄԵՐ ՀՈԳԻՆԵՐՈՒՄՆ ՄԷՁ ՀՊԱՐՏՈՒԹԻՒՄՆ ՍՏԵՂԾԱԾ Է»

ԿՂՍԷ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱԶԵՐԵԱՆ

Թղթակից ՊՈՒՐՑ ՀԱՍՈՒՏ

Յաջորդաբար երրորդ տարին ըլլալով, Վարդանանց տօնին զուգարկապող «Հայ Սկաուտի Օր»-ուան առիթով, Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի սկաուտական կազմերու պատասխանատու խմբապետ խմբապետուհիները կէսօրուան ճաշի հիւրը եղան Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեանի:

Արդարեւ, Կիրակի, 3 Փետրուար 2008ին, Նոր Մարաշի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ մատուցուեցաւ Ս. Պատարագ, որուն հանդիսապետեց եւ իր պատգամը փոխանցեց Առաջնորդ Սրբազանը: Ան իր քարոզին սկիզբը անդրադարձաւ Բուն Բարեկենդանի խորհուրդին:

Ապա, Առաջնորդը յայտնեց, որ Բուն Բարեկենդանի օրը Լիբանանի Հայոց Թեմի կեանքին մէջ աւանդութիւն դարձաւ. այդ օրը եկեղեցական արարողութեան ներկայ կ'ըլլան Հ.Մ.Ը.Մ.Ի պատասխանատու խմբապետ սկաուտները, որպէսզի ցուցաբերեն մաս մը այն դաստիարակութենէն, զոր

Հ.Մ.Ը.Մ.ականը կ'առնէ իր սկզբունքներուն գործադրութեան ընդմէջէն:

«Հ.Մ.Ը.Մ.ը իր սկաուտներով, իր գործունէութեամբ մեզի կը զգացնէ կարգ ու կանոնի, կարգապահութեան, գիտակցութեան, ծառայասիրութեան, պատրաստակամութեան բոլոր երեւոյթները», շեշտեց Գեղամ Եպս. Խաչերեան՝ աւելցնելով, որ Հ.Մ.Ը.Մ.ականները մեր կեանքին մէջ ուրախութիւն բերող անձեր եղած են, իբրեւ Վարդանանց օրինակով ազգին ծառայութեան տրամադրուած կազմակերպութեան մը անդամները:

Այնուհետեւ, երրորդ տարին ըլլալով, Ազգ. Եղիշէ Մանուկեան Քոլէճի «Սիրան Մանուկեան» սրահին մէջ Հ.Մ.Ը.Մ.ական պատասխանատու խմբապետ-խմբապետուհիները սեղանակիցը եղան Առաջնորդ Սրբազան Հօր, ներ-

կայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գրիգորիս Պողարեանի: Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի, Պէյրութի, Անթիլիասի եւ Ժըտէյտէի մասնաճիւղերու պատասխանատու խմբապետ սկաուտներու կողքին ներկայ էին նաեւ Լիբանանի Թեմի Քաղաքական Ժողովի անդամ Բաֆֆի Սիւլեան, Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի անդամ Գառնիկ Մկրտիչեան, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ Լուսին Գազէզեան, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Սկաուտ-Խորհուրդի անդամներ Իրմա Ճէրէճեան եւ Նուպար Ռումուլեան, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային խմբապետ Յակոբ Չալաքեան, ճիւղի խմբապետ Վահէ Պողոսեան եւ Քուէյթէն խմբապետ Յակոբ Մելքիսէթեան:

Բարի գալուստի խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային խմբապետ Յակոբ Չալաքեան: Ան նկատել տուաւ, որ յառաջիկայ երկու տարիներուն Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան զլխաւոր թեման պիտի ըլլայ զուտ հայկական՝ մեկնելով Սրբազան Հօր առաջարկած «Հայկական է, պատուական է» կարգախօսէն՝ աւելցնելով, որ պատասխանատուներ պիտի փորձեն գործնական գետնի վրայ կիրարկել այդ կարգախօսը՝ իրենց





աշխատանքներուն եւ յայտագիրներուն ընդմէջէն:

Այնուհետեւ, մասնաճիւղերէ անդամներ ներկայացուցին գեղարուեստական պատշաճ յայտագիր մը, որ կ'ընդգրկէր նուազ եւ պար:

Ապա, Առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեան խօսք առնելով նկատել տուաւ, որ տարեկան այս աւանդութիւնը Առաջնորդարանի նախաձեռնութեամբ հետզհետէ կը դառնայ մնայուն եւ կ'ուսնայ նպատակ: Ան յայտնեց, որ այս հանդիպումը նշանակութիւն մը եւ ըսելիք մը ունի: Ան բացատրեց, որ Հ.Մ.Ը.Մ.ի տարագր, գոր հագած են ներկաները, առանց խօսքի ըսելիք մը ունի, իսկ իրենցմէ իւրաքանչիւրը իր պատասխանատուութեամբ մեր ժողովուրդի կեանքին մէջ ըսելիք եւ ընելիք ունի: «Ես կ'ուզեմ, որ դուք այս հանդիպումին նշանակութիւնը տեսնէք ամէն տարի», շեշտեց Առաջնորդ Սրբազանը՝ աւելցնելով, որ Հ.Մ.Ը.Մ.ականները աւելի գիտակից եւ

արթուն պէտք է ըլլան ազգային կեանքին վերաբերող հարցերու մէջ:

Իր խօսքը ներկայ Հ.Մ.Ը.Մ.ականներուն ուղղելով, Առաջնորդ Սրբազանը նկատել տուաւ, որ իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ական 90 տարուան վաստակ ունի եւ անոր համար ալ արժէք մը կը ներկայացնէ՝ նշելով, որ անոնք կը ներկայացունեն նաեւ Հ.Մ.Ը.Մ.ական սկառուտական հաւատամքը, սկզբունքները եւ արժէքները: Առաջնորդ Սրբազանը շեշտեց, որ «Այս հանդիպումը տեղի կ'ունենայ, որովհետեւ մենք ձեզմէ պակաս լիք ունինք»: Ան ընդգծեց, որ պէտք է իրենց մէջ Հ.Մ.Ը.Մ.ականը ճիշդ ձեւով կազմաւորուի՝ աւելցնելով, որ իրենք Հ.Մ.Ը.Մ.ականի նկարագիրով ընդունուած են ժողովուրդին կողմէն եւ պէտք է շարունակեն այդպէս մնալ, տարագաւոր կամ ոչ: Ան նաեւ շեշտեց, որ Հ.Մ.Ը.Մ.ականի պատրաստակամ, պարկեշտ ու ծառայասէր ոգին է, որ կ'ակընկալուի իրենցմէ եւ աւելցուց. «Հ.Մ.Ը.Մ.ականի նկարագիրը լրջութեամբ


պէտք է առնէք... Ես կ'ուզեմ Հ.Մ.Ը.Մ.ականը կատարեալ տեսնել»:

Անդրադառնալով «Հայկական է, պատուական է» կարգախօսին, Սրբազանը բացատրեց, որ այս նշանաբանը պիտի կիրարկուի այս տարի, որովհետեւ «նոր սերունդը սկսած է հայկականութենէ ամչնալ, մոռնալ, անտեսել»: Ան հարց տուաւ, թէ ինչպէս հայ ըլլալու զգացումը կ'արթնայ եւ բացատրեց, թէ այդ մէկը կ'ըլլայ հպարտութեամբ: «Ազգային հպարտութիւն ունեցող անձն է, որ ազգային սեփական արժէքը ամէն ինչէ վեր կը դասէ», հաստատեց Առաջնորդ Սրբազանը:


Եզրակացնելով իր խօսքը, Գեղամ Եպս. Խաչերեան յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը մեր հոգիներուն մէջ հպարտութիւն ստեղծած է եւ կոչ ուղղեց բոլորին ճիշտ չինայելու, որպէսզի իրենց մէջ ազգային հպարտութիւնը արթնայ:

ARMENIA
for private and group trips
www.saberatours.fr

Saberatours Sevan Voyages



WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY



Photos: © Yann Arthus-Bertrand / Terra via du Ciel. Licence 075 960031 - Studio / KEN 2005 / A&S

- Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days

11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com

48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com

67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr

32-38, rue Hanrabedoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
sabera@arminco.com



«ՀԱՅ ՄԿԱՌԻՏԻ ՕՐ»ՈՒՄՆ ԵՒ Հ.Մ.Ը.Մ.Ի 89ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՄԻՇԼԻԻ ՄԷՋ

Մարալ Կենդոյեան ԳԱՄԻՇԼԻ

23

Դեկտեմբեր 2007ին, Հ.Մ.Ը.Մ.ի Գամիշլիի մասնաճյուղի վարչութեան եւ Սկաուտ-Սորհուրդին նախաձեռնութեամբ եւ աստիճանաւորական կազմին ջանքերով, շրջանի «Կիւլպէնկեան» սրահին մէջ նշուեցաւ «Հայ Սկաուտի Օր»ը եւ Հ.Մ.Ը.Մ.ի 89ամեակը:

Տօնակատարութեան ներկայ գտնուեցան Գամիշլիի Ս. Յակոբ եկեղեցոյ հոգեւոր հովիւ՝ Յակոբ Քհչոյ-Մելքոնեան, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Արմէն Քէօշկէրեան, երէց Հ.Մ.Ը.Մ.ականներ, ծնողներ եւ համակիրներու հոծ բազմութիւն մը:

Տօնակատարութիւնը բացուեցաւ մէկ վայրկեան յոտնկայս լուծեամբ՝ յարգելու համար յիշատակը մահացած Հ.Մ.Ը.Մ.ականներու: Ապա, շեփորախումբը նուազեց Սուրիոյ եւ Հայաստանի քայլերգները: Բացման խօսքը ար-

տասանեց մասնաճյուղի վարչութեան ատենապետ եղբ. Անդրանիկ Սարգիսեան: Ան Հ.Մ.Ը.Մ.ի էութեան եւ նպատակին անդրադառնալով ըսաւ. «Հարկ է յիշել եւ անթաւամ պահել յիշատակը այն հիմնադիր եղբայրներուն, որոնք հայ կեանքի ամէնէն դժուար օրերուն հաւաքած եւ դաստիարակած են երիտասարդ սերունդը՝ վառ պահելու համար կեանքը Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքէն ներս»:

Բացման խօսքէն ետք խումբ մը արեւոյշներ ներկայացուցին չափական մարզանք: Այնուհետեւ եղբ. Նարեկ Մելքոնեան մեներգեց «Կարօտի յիշատակին» երգը, երգեհոնի ընկերակցութեամբ եղբ. Տիգրան Յովհաննէսեանի: Ապա խումբ մը արիներ ներկայացուցին քարաթէի շարժուձեւեր: Գայլիկ-արծիկները ներկայացուցին թատերական պատկեր մը:

Գեղարուեստական յայտագրով քոյր Դայար Զաքարեան ասմունքեց Մուշեղ Իշխանի «Անցէջ հպարտ»ը: Անգամ մը եւս ներկաներու հոգիներն ու սրտերը ուրախութեամբ եւ պարծանքով տոգորուեցան, երբ խումբ մը քաջասիրտ



Մասնաճյուղի ատենապետ եղբ. Անդրանիկ Սարգիսեան:

արի-արենոյշներ ներկայացուցին բուրգեր: Յաջորդեց գաւեշտ մը՝ խումբ մը արի-արենոյշներու կողմէ:

Օրուան պատգամը փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Արմէն Քէօշկէրեան: Եղբայրը ողջունեց մասնաճյուղի վարչութիւնը, երէց Հ.Մ.Ը.Մ.ականներն ու համակիրները: Ան իր պատգամին մէջ դրուատեց Հ.Մ.Ը.Մ.ի 89ամեայ վաստակը, շեշտելով որ Հ.Մ.Ը.Մ.ը իր հիմնադրութեան առաջին օրէն գործեց գաղափարական առողջ գետնի վրայ, ազգային շունչով եւ բարձր ոգիով, մարմնակրթանքին միացնելով հոգիի կրթութիւնը եւ գաղափարական ոգեւորութիւնը:

Սկաուտական երգչախումբը հանդէս եկաւ ազգային-յեղափոխական շարք մը երգերով:

Հուսկ, Յակոբ Քհչոյ-Մելքոնեան փոխանցեց իր սրտին խօսքը: Ան կոչ ուղղեց ամուր մնալու Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական գաղափարներուն:

Տօնակատարութիւնը փակուեցաւ Քահանայ Հօր «Պահպանիչ»ով:



Տօնակատարութենէն ետք յիշատակի նկար՝ մասնաճյուղի սկաուտներու:



ՖՈՒԹՊՈՒԼԻ ՄՐՑԱՇԱՐՔ՝ ԳԱՄԻՇԼԻԻ ՄԷՋ

Գօգօ Խարածեան ԳԱՄԻՇԼԻ

Անցնող տարիներու նման, այս տարի եւս, Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը Գամիշլիի մէջ կազմակերպեց ֆուտպոլի մրցաշարք մը, որուն իրենց մասնակցութիւնը բերին հիւրընկալ Գամիշլիի մասնաճիւղին խումբը, Լաթաքիայէն եւ Հալէպէն երկու խումբեր (կրտսեր եւ սկառուտական արի միաւորի «Բաբգէն Սիւնի» խումբը):

Հալէպի եւ Լաթաքիոյ խումբերը Գամիշլի հասնելով ջերմ ընդունելութեան արժանացան Գամիշլիի վարչութեան եւ ֆուտպոլի յանձնախումբին կողմէ: Բոլոր կազմերը ընդունուեցան Ազգ. Եփրատ վարժարանի «Կիւլպէնկեան» սրահին մէջ: Կարճ դադարէ մը ետք տեղի ունեցաւ նախաճաշ, որմէ ետք կազմուեցաւ մրցաշարքին յատուկ յանձնախումբը՝ իւրաքանչիւր շրջանէ ժամանած եղբայրներէ: Յանձնախումբը կատարեց մրցաշարքին վիճակաձգութիւնը, որուն հիման վրայ առաջին մրցումը կատարուեցաւ Լաթաքիոյ սկառուտա-



Գամիշլիի ախոյեան խումբը:

կան «Բաբգէն Սիւնի» եւ Գամիշլիի կրտսերներուն միջեւ: Հ.Մ.Ը.Մ-ական հարազատ միջնորդուող ընթացող այս մրցաշարքը աւարտեցաւ Գամիշլիի խումբին յաղթանակով: Մրցաշարքը իր աւարտին հասաւ յաջողութեամբ, ըլլայ մասնակցութեամբ, կազմակերպութեամբ եւ ինչու չէ նաեւ համակիրներու քաջալերանքով:


Մրցաշարքի աւարտին, Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Արմէն Քէօզկէրեան գնահատական խրախուսիչ խօսքեր ուղղեց մարզիկներուն, ապա ըստ սովորութեան, տեղի ունեցաւ պարգևատրում: Ան հրաւիրեց Սուրիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Բաֆֆի Տէր Աբրահամեանը՝ փոխանցելու իր սրտի խօսքը: Եղբայրը անդրադարձաւ մրցաշարքի նպատակին՝ Հ.Մ.Ը.Մ-ի եղբայրները համախմբել, շրջաններու



Մասնաճիւղին վարչութիւնը Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամներուն հետ:



միջեւ յարաբերութիւնները սերտացնել եւ անոնց միջեւ մրցակցութեան ոգին բարձր պահել: Ան գնահատեց առաջին հանդիսացող խումբը եւ պարգեւատրուող եղբայրները՝ անոնց մաղթելով յարատեւ յաջողութիւն եւ յառաջդիմութիւն: Ապա տեղի ունեցաւ պարգեւատրումը: Առաջին երեք դիրքերը գրաւող խումբերը ստացան բաժակներ: Մրցաշարքի կողմէրը զանդիսացաւ Գամիչլիէն եղբ. Յակոբ Փափազեան (10 կոլ), իսկ մրցաշարքի տիպար մարզիկը հռչակուեցաւ «Բաբգէն Սիւնի» խումբէն եղբ. Վարդան Տնտրեան:



Ստորեւ՝ մրցումներուն արդիւնքները-

● Ա. հանգրուան

Լաթաքիա-«Բաբգէն Սիւնի» 6-3

Գամիչլի-կրտսերներ 9-5

● Յրդ-Կրդ դիրքի մրցում

«Բաբգէն Սիւնի»-կրտսերներ 2-5

● Աւարտական

Գամիչլի-Լաթաքիա 5-3

Եղբայրները վերադարձան «Կիւլպէնկեան» սրահ, ուր տեղի ունեցաւ կէսօրուան ճաշ: Ուշագրաւ էր ստեղծուած ջերմ մթնոլորտը՝ մարզիկներուն, պատասխանատու մարզիչներուն եւ վարչութեան միջեւ:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՆՈՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ

Անցնող ամիսներուն, Ներկայացուցչական եւ անդամական իրենց ժողովները գումարեցին միութեան կարգ մը շրջանները, որոնք ընտրեցին պատասխանատու իրենց նոր կազմերը:

Ստորեւ՝ նորընտիր կազմերը իրենց աշխատանքային բաժանումներով:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

- Ատենապետ- եղբ. Մովսէս Պարսումեան
- Ատենադպիր- քոյր Մարո Թազեան
- Գանձապահ- քոյր Սիրվա Սաղրեան
- Հաշուապահ- եղբ. Վահէ Զամիչեան
- Սկառուտականի ներկայացուցիչ- քոյր Լուսին Գազէզեան
- Պասքեթպոլի ներկայացուցիչ- եղբ. Սեպուհ Թօփալեան
- Տնտեսականի ներկայացուցիչ- եղբ. Վահան Համամճեան
- Ֆութպոլի ներկայացուցիչ- եղբ. տղթ. Յարութիւն Տէ-միրճեան
- Հեծելաըշակի ներկայացուցիչ- եղբ. Նազո Հապիպեան
- Ճատրակի ներկայացուցիչ- եղբ. Գաբրիէլ Արզումանեան
- ԼեՎԱՄի ներկայացուցիչ- եղբ. Ժիրայր Ժինեան

ԿԻՊՐՈՍԻ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.Ի ՄԵԿՈՒՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

- Ատենապետ- եղբ. Արթո Թեղլալեան
- Ատենադպիր- եղբ. Յարութ Տէր Պետրոսեան
- Գանձապահ- եղբ. Գրիգոր Մահտեսեան
- Փոխ ատենապետ- եղբ. Ճոն Կէվէրեան

Խորհրդականներ- քոյր Մայտա Նշանեան, եղբայրներ Արման Պալթայեան, Ճորճ Թորոսեան, Համօ Սամոնեան եւ Արթօ Յարութիւնեան:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԼՄԵԼՈՑԻ ՄԵԿՈՒՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

- Ատենապետ- քոյր Յասմիկ Օհանեան
- Ատենադպիր- եղբ. Յովհաննէս Յովհաննէսեան
- Գանձապահ- եղբ. Միսաք Վարդանեան
- Հաշուապահ- եղբ. Սարգիս Տէր Ղազարեան
- Փոխ ատենապետ- եղբ. Վարդան Պողոսեան
- Խորհրդականներ- եղբայրներ Բաֆֆի Օհանեան եւ Նշան Շահինեան:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՔԵՍԱՊԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

- Ատենապետ- եղբ. Յակոբ Հանէշեան
- Ատենադպիր- քոյր Սօսի Ղազարեան
- Գանձապահ- եղբ. Վաչէ Աղպաշեան
- Հաշուապահ- եղբ. Ճորճ Սաղտըճեան
- Գոյքապահ- քոյր Ռուզան Բէնդէզեան

Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԱԹԱՔԻՈՅ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

- Ատենապետ- եղբ. Արտօ Խալոյեան
- Ատենադպիր- քոյր Ալին Գաբրիէլեան
- Գանձապահ- եղբ. Յարօ Տէլիբմէնճեան
- Հաշուապահ- քոյր Անոյշ Ղազարեան
- Գոյքապահ- եղբ. Յարութ Մաքրինճեան
- Մարզական- եղբ. Մովսէս Կարապետ
- Սկառուտ- Խորհուրդի կապ- եղբ. Ճորճ Ալէմեան



ԵՂԲ. ՊԵՏՐՈՍ ՎԷՔԻԼԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Գառնիկ Սկրտիչեան ՊՈՒՐԾ ՀԱՍՈՒՏ

Հ․Մ․Լ․Մ․ական արժանաւոր եղբայրներու տերեւաթափը կը շարունակուի:

Հագիւ կը պատրաստուէինք 2008ը նոր յոյսով սկսիլ, ցաւով եւ յուզումով լսեցինք մահուան գոյժը Հ․Մ․Լ․Մ․ի եւ Դաշնակցութեան համար միշտ տագնապող հաւատաւոր եղբայր Պետրոս Վէքիլեանի:

Ժամանակէ մը ի վեր, ան առողջապահական հարցեր կը դիմազրաւէր հերոսի մը անվեհերութեամբ, սակայն կը մնար անխոցելի՝ շնորհիւ իր հաւատաւոր հոգիին, Դաշնակցականի աննիւթական հզօր ոգիին եւ Հ․Մ․Լ․Մ․ականի աներեր հաւատքին:

Հակառակ իր ֆիզիքական տակաւ նշմարելի մաշումին, ան կը պահէր սակայն իր պայծառ իմացականութիւնը, իր կուռ տրամաբանութիւնը, բծախնդիր հայերէնով մը շարահիւսելու իր ոճը եւ ընկերական հաճելի «հիւմոր»ը:

Եղբ․ Պետրոս Վէքիլեան Պուրճ Համուտի Նոր Մարաշի շրջանէն էր: Ծնած էր 1929ին: Դժուարին մանկութիւն մը ու-

նեցած էր եւ, սակայն, զոհաբերութիւններով ու ծնողքին անսակարկ քաջալերանքով յաճախած էր Հայ Կաթողիկէ Մեսրոպեան Վարժարանը: Համալսարանական ուսում չստացած ըլլալու իրողութիւնը չէր տկարացուցած իր հոգեվիճակը, այլ ընդհակառակը՝ ան դարձած էր մոլի ընթերցող, այդ ձեւով կարծէք իր վրէժը լուծելով համալսարանական ուսման անկարելիութենէն: Եղբ․ Պետրոս կը տիրապետէր հայերէն, արաբերէն եւ ֆրանսերէն լեզուներու եւ այդ ձեւով կը պայքարէր կեանքի իրականութեան դէմ: Ան խոր պաշտամունք ունէր Դաշնակցութեան անձնուրաց նուիրեալներուն, անոր կուռ կազմակերպութեան, ոգեղէն արժէքներուն եւ ընկերասիրութեան:

Ան իր ողջ էութեամբ կը հաւատար, որ Դաշնակցութեան ազգային գաղափարներու հզօրութեամբ լաւագոյնս կարելի է ծառայել հայ ազգի Հայաստանեան, Արցախեան եւ Սփիւռքի հիմնահարցերուն լուծման: Ան եղաւ Դաշնակցութեան նուիրեալ զինուոր, եւ սակայն, երբեք չստորագնահատեց հայրական եւ ամուսնական կեանքի իր պարտաւորութիւնները: Պատասխանատուութեան խոր գիտակցութեամբ եւ հայեցի կրթութեամբ զաւակներ դաստիակեց եւ յաջողեցաւ զարգացած, համալսարանաւարտ եւ էպպէս հայ ոգիով զաւակներ պարգեւել ազգին: Ափսո՛ս, որ արկածի մը հետեւանքով կորսնցուց իր մէկ հատիկ մանչ զաւակը, որուն յիշատակը մինչեւ մահ հոգիին մէջ վառ պահեց:

Եղբ․ Պետրոս ճշգրտապահ ժողովական էր: Ազգային Սահմանադրութեան տառն ու ոգին խորապէս իւրացուցած, ան կը յաջողէր իր կուռ տրամաբանութեամբ պատշաճ լուծումներ առաջարկել ներկայացուած բոլոր տեսակի հարցերուն:

Եղբ․ Պետրոսին համար մեծ կամ փոքր, ընտանեկան, թաղային, ազգային, կազմակերպական եւ կամ միութեան կապուած եւ կարեւորութիւն ներկայացնող հարցեր գոյութիւն չունէին: Ամենայն բարեխղճութեամբ եւ բծախնդրութեամբ ան կը կատարէր իրեն վստահուած բոլոր պարտականութիւնները:

Փոքր տարիքէն, ան իր պատանեկութիւնը անցուց Նոր Մարաշի կու-



1955 խխոյեան Յ.Ս.Ը.Ս.ի խումբը: Եղբ. Վեքիլեան ոտքի, ձախէն առաջինը:

սակցական առինքնող մթնոլորտին մէջ: Ապա դարձաւ նոյն շրջանի հաւատաւոր ընկերներէն եւ այնուհետեւ՝ կոմիտէութեան կազմի անդամ: Մօտէն գործակցեցաւ Հ.Յ.Դ. դեկավար դէմքերու հետ, որոնց կապուած մեծ յուշեր ունեցաւ ան:

Լիբանանի 1975ի դէպքերու սկիզբէն, եղբ. Պետրոս կը նշանակուի գանազան յանձնախումբերու մէջ եւ կը ըստանձնէ պատասխանատու պաշտօններ:

1991ին, Լիբանանի պատերազմի աւարտով, դուռը կը բացւէր երեսփոխանական ընտրութիւններու: Եղբ. Պետրոս եղաւ Կեդրոնական Կոմիտէի ընտրական մարմինի անդամ եւ ձեռնհասօրէն վարեց ատենապետի պաշտօնը:

Այսպէս, ան միշտ եղաւ տագնապող ու գործող Դաշնակցական:

Իր մեծ փափաքն էր, որ իր պաշտած կազմակերպութիւնը եւ անոր ազգային գաղափարները տարածուին Հայաստանի եւ Արցախի մէջ, առանց մոռնալու սփիւռքեան մեր բոլոր կազմակերպութիւններու կառօցներն ալ զօրաւոր պահելու անհրաժեշտութիւնը:

Եղբ. Պետրոս իր մեծ ներդրումը բերաւ Հ.Մ.Ը.Մ-ի շարքերուն, սկիզբը իբրեւ Ֆուլթպոլիստ, ապա՝ իբրեւ Հ.Մ.Ը.Մ-ի ներկայացուցչական խումբի մարզիկ: Ան վայելած էր Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի փառքի օրերը, Սարգիս Ազնաւուրեաններու, Վարդիվառ Յովհաննէսեաններու հետ միասին: Եղած էր վարչական, ապա ատենապետ Հ.Մ.Ը.Մ-ի Պուրճ Համուտի

մասնաճիւղին եւ 1980ին ընտրուած էր Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ:

Եղբ. Պետրոսին Հ.Մ.Ը.Մ-ական վաստակը կարելի չէ խտացրնել քանի մը տողերու մէջ: Իր գործունէութիւնը յաւատարմութիւնը յիշուի միութեան պատմութեան մէջ:

Այս բոլորին կողքին, ան իր նպաստը բերաւ լիբանանահայ ազգային կեանքին, Արամ Ա. Վեհափառի Առաջնորդութեան տարիներուն, նաեւ՝ Գեղամ Սրբազանի Առաջնորդութեան շրջանին, իբրեւ Ազգային Իշխանութեան բնակարանային յանձնախումբի անդամ եւ ատենապետ Ազգային Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Գոյճճի ինամակալութեան:

Իր այնքան սիրած Պուրճ Համուտին ան ծառայած է իբրեւ Քաղաքապետական Խորհուրդի անդամ, 38 տարի գանազան պարտականութիւններ ստանձնելով:

Եղբայր Վէլքիւեանին համար մեր ազգային, կազմակերպական թէ՛ միութեանական կեանքին մէջ արձանագրուող որեւէ թերութիւն կ'արժանանար քննադատութեան:

Թող հողը թեթեւ ճնշէ վրադ, հաւատաւոր սիրելի՛ եղբայր Վէլքիւեան:

USUBUNP
ԳՐԱԿԱՆ ԱՐԵՒՍՏԱՅԱՅԵՐԷՆ
Խաչիկ Իշխանեան, Պէյրուս, 2008:

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL

★ ★ ★

PAVILLON MONCEAU

PARIS



43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38
infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com

*Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating / air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.*

*The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.*





ՀԱՅԿԱԿԱՆ ԱՒԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԶԱՏԻԿ



Սալբի Լատոյեան ՊԵՅՐՈՒԹ

Ե կեղեցական մեր տօնացոյցին մէջ կարեւոր տեղ ունի Զատիկը: Զատիկուան տօնը կապուած է Քրիստոսի Յարուածեան հետ: Հին հայկական ավանդուածներու մէջ Զատիկը կը տօնուէր գարնան սկիզբը, երբ չաստուածներուն կը նուիրէին նորածին գառնուկները: Զատիկուան շրջանին կ'երեւի միջատ մը, որ կը կոչուի Զատիկաճճի: Այս միջատը միակն է, որ կը կոչուի տօնի մը անուանով: Զատիկին հարկ է՝ Սուրբ Պատարագի ներկայ գտնուիլ եւ հաղորդուիլ: Զատիկուան հաճելի սովորութիւններէն է հաւկիթ ներկելն ու խաղալը:

ԻՆՉՈՒ ՀԱԻԿԻԹ ԿԸ ՆԵՐԿԵՆՔ

Աւանդուածեան համաձայն, ժամանակին մարդիկ գարնանամուտին իրարու հաւկիթ կը նուիրէին: Կարմիր հաւկիթը ամէնէն յատկանշականն էր, որովհետեւ ան կը ներկայացնէր Քրիստոսի արիւնը: Պինդ խաշուած հաւկիթը քրիստոնեաներուն կը յիշեցնէ Քրիստոսի գերեզմանին վրայ դրուած ժայռը:

ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՄԵՆՔ

ԵՐԿՐԱՇԱՐԺ

Երկրին կեղեւը անշարժ եւ կարծր կ'երեւի, բայց իրականութեան մէջ ան միշտ շարժումներու մէջ կ'ըլլայ: Այդ շարժումները երբեմն շատ մեղմ կ'ըլլան եւ մենք զանոնք չենք զգար, իսկ երբեմն ալ՝ զօրաւոր կամ շատ զօրաւոր կ'ըլլան եւ պատճառ կը դառնան երկրաշարժներու:

Քանի մը երկվայրկեան արդէն իսկ բաւարար է, որ պէսզի մեծ քաղաք մը երկրաշարժի պատճառով ամբողջութեամբ քանդուի: Գիտնականներ երկար ուսումնասիրութիւններէ ետք կարողացած են կազմել երկրաշարժներու վտանգին ենթարկուած շրջաններու քարտէսը: Այդ շրջանները կը նկատուին երկրաշարժային գօտի, այսինքն՝ շրջաններ, ուր յաճախ երկրաշարժներ տեղի կ'ունենան, ինչպէս Մ. Նահանգներու Քալիֆորնիոյ նահանգը: Ամէնէն շատ լեռնային շրջաններու մէջ տեղի կ'ունենայ երկրաշարժը: Երկրաշարժը կ'ունենայ ուժի տարբեր աստիճաններ (1-12) եւ կը չափուի ռիւթրով: Հետաքրքրական է նշել, որ կարգ մը կենդանիներ նախքան երկրաշարժ ըլլալը կը զգան եւ անմիջապէս կը հեռանան վտանգի գօտիէն:





Ի՞նչ ԿԸ ՓԱՓԱԲԻՄ ԸԼԼԱԼ ԱՊԱԳԱՅԻՆ

ՕԴԱԶՈՒ


Օդաչուին գործը մեծ պատասխանատուություն կ'ենթադրէ, որովհետեւ ան ճամբորդները կը փոխադրէ... օդին մէջ:

Օդաչուն եւ թռիչքի խմբակը լաւապէս պատրաստուած պէտք է ըլլան: Որեւէ թռիչքէ առաջ օդաչուն պէտք է ստուգած ըլլայ օդանաւին վառելանիւթին քանակը, օդին փոփոխությունը եւ այլն, որպէսզի ճամբորդները ապահով թռիչք մը ունենան:

Օդանաւ քշելը վարկ ունեցող արհեստ մըն է, բայց միեւնոյն ատեն՝ շատ դժուար է:

Օդաչուն նկարագիրով պէտք է ըլլայ քաջ, ջղուտ եւ միշտ պատրաստ՝ անակնկալներ դիմագրաւելու: Ֆիզիքապէս ան պէտք է առողջ ըլլայ, որպէսզի կարենայ գիշերները արթուն մնալ, ժամի փոփոխութեան եւ օդի ճնշումին դիմանալ:

Նախքան օդաչու ըլլալը թեկնածուն պէտք է տարիներ օդաչուի օգնական ըլլայ:



ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԷՆ



ԱՐԾԻԸ

Արծիւը մեծագոյն ու լաւագոյն բոյնը կը շինէ: Ան առաւելագոյնը կրնայ երեք հաւկիթ ածել:

Արծիւները ընդհանրապէս ցուրտ երկիրներու մէջ կ'ապրին: Անոնք կը յատկանշուին իրենց ուժով եւ մեծութեամբ:

Արծիւը թռչուններու ընտանիքին մեծագոյնն է: Անոր հասակը մօտաւորապէս 76 սանթիմետր է: Ընդհանրապէս էգ արծիւները աւելի մեծ կ'ըլլան՝ քան արուները:

Արծիւին ձայնը շատ սուր է, իսկ տեսողութիւնը՝ մարդու տեսողութենէն 4 անգամ աւելի զօրաւոր:

Աշխարհի վրայ մօտաւորապէս 59 տեսակ արծիւ գոյութիւն ունի:

Արծիւները իրենց բոյները կը շինեն

լքուած անտառի մէջ, բարձր ծառի մը վրայ, ուր հասնիլը շատ դժուար կ'ըլլայ եւ երբեմն՝ անկարելի:



ՀԱՆԵԼՈՒԿ

Ո՞վ է, ի՞նչ է:

Երէկ ան չկար, իսկ վաղը պիտի չըլլայ:

(Պատասխանը՝ յաջորդիւ: Նախորդ հանելուկին պատասխանն էր Խխունջ):





Էլի Հուլիշեան

«ՄԱՐԶԻԿ»Ի «ՔԱԶԱԼԵՐ ԱՆԴԱՄ»ՆԵՐ

Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան որոշումով հաստատուած է «Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներու դրութիւն: Թերթին «Քաջալեր անդամ» կը նկատուին բոլոր անոնք, որոնք տարեկան 200 եւ աւելի ամերիկեան տոլար կը նուիրեն անոր բարգաւաճման ծրագիրներուն:

«Քաջալեր անդամ»ներու անունները կը հրատարակուին թերթին յաջորդական 12 թիւերուն մէջ:

«Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներ են.-

ԱՐԵՎԵԼԵԱՆ ՄԻԱՅԵԱԼ ՆԱԳԱՆԳՆԵՐԷՆ Ազատուիի Դանիէլեան, Վահրամ Դանիէլեան, Լեւոն եւ Թագուիի Փալեաններ, Պետօ եւ Սիրան Տէր Պետրոսեաններ, Չարեհ Գարակիլիէան, Յակոբ Թոքաթլեան, Վազգէն Լախոյեան եւ Կարպիս Պարսումեան:

ԳԱՆԱՏԱՅԷՆ Վաղարշ Էհրամճեան, Արթօ Մարգարեան, Անահիտ Մարգարեան, Տիգրան Հաճէթեան, Լեւոն Մելքոնեան, Հրանդ Տէտեան, Արթին Սաժակեան, Արա Իմամճեան, Պետրոս Պաքըրճեան, Բաբգէն Կարապետեան, Լեւոն Նաճարեան, Գառնիկ Նազարէթեան եւ Կարապետ Ն. Թովճեան:

ՅՈՐԴԱՆԱՆԷՆ Ճորճ Տաբեան:

www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org

ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆ

1. «Ֆորմիլա 1»ի գերմանացի մրցավարորդ:
2. Եւրոպական հանրապետութիւն:
3. Իգական օտար անուն - Ռուսերէն՝ այո՛:
4. Ըսել է, այլ խօսքով:
5. Ճարտարութիւն - Կրկնուած ձայնաւորներ:
6. Հնձեղու գործիք - Անձնական դերանուն - Նշա- նաւոր պուպրիկ մը:
7. Այբուբենէն - Տիգրան Բ-ի եւ Արշակ Բ-ի ար- քունի ներքինապետը - Ինք:
8. Կեդրոնական Ամերիկայի հնդիկ ցեղախումբե- րէն - Ցանկալ - Խորք:
9. Փայտէ կազմած՝ եզան վիզին - Յակոբ Պարոն- եանի ծննդավայրը:
10. Ատաղձ - Տառի մը անունը - Աղամանդ:
11. Դրան մուտք - Մարմնի ներքին գործարաննե- րէն:
12. Դէմքին վերի մասը - Վանայ լիճի կղզիներէն:
13. Տեղեկանալ - Լիբանանահայ աթլէթ՝ Թասալք- եան:
14. Ժխտական մասնիկ - Մանր ճնճողուկ:
15. Խեղճ - Ժխտական մասնիկ - Ժամանում:
16. Շնորհագուրդ եղած ամերիկացի վազորդը:
17. Մակբայակերտ մասնիկ - Պարոն - Յուցական ածական:
18. Իրերայաջորդ գիրեր - Արտօնագիր:
19. Կողմ - Հասկցի՛ր - 1998ի Ողիմպիականները հիւրընկալած քաղաքը:
20. Գեղամ Սարեանի երկերէն - Մանր քար - Ան- կատար:


ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1. 26 հազար անդամ հաշուող համահայկական 20 միութիւնը - Կոնաքեր ծառ - Անմարդավայել:
2. Իգական օտար անուն - Երաժշտական չափ - Առարկայ:
3. Անձնական դերանուն - Մարդածի, առասպելական էակ:
4. Հայաստանի 2007ի լաւագոյն մարզիկը - 420 - Վաղեմի:
5. Փքին - Կարծր շինանիւթ - Խոհուն - Ձայնանիշ:
6. Իգական օտար անուն - Այբուբենէն - Լեցուն - Լիբանանի լեռներէն:
7. Կամշոտութիւն - Յուցական ածական - Աղօթարան:
8. Ռամկօրէն՝ այո՛ - Կտակ - Համեմուած կերակուր:
9. «էն. Պի. էյ.»ի կազմերէն (երկու բառ) - Արօրի բռնատեղ:
10. Հոռոմէական դիցուհի - Կապարագրիչ - Կլոր պատուհան:
11. Ձայնանիշ - Ինտոնեզիոյ կղզիներէն - Իր վարդազոյն տուֆով նշանաւոր Հա- յաստանի քաղաքը - Լուսաւորիչի հայրը:
12. Անձ - Խումբ - Հազար ու մէկ եկեղեցիներու քաղաքը:
13. Ափրիկեան երկիր - Դալարութիւնը կորսնցուցած:
14. Բեմական ներկայացում մը - Ռոմի Շնայտրրի Ֆիլմերէն:
15. Անձնական դերանուն - Էրիթրոյ մայրաքաղաքը - Արեւու մոլորակներէն:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15

ԹԻՒ 166 ԽԱՉԲԱՌԻ ԼՈՒՑՈՒՄԸ

1	Մ	Ա	Յ	Ք	Ը	Լ	Ֆ	Է	Լ	Փ	Ս									
2	Ա	Ր	Ա	Ք	Ս	Ի	Լ	Ա	Փ	Ե	Լ									
3	Ր	Ա	Մ		Տ	Ա	Լ	Ի	Ք		Ն	Ա								
4	Ի	Մ	Ա	Ն		Ջ					Խ	Ե	Ի							
5	Ա		Ռ	Ա	Տ	Օ					Ն	Կ	Ա	Ն	Ա	Կ				
6	Ն										Դ	Ա	Ն	Ա	Կ					
7	Ա										Ա	Լ	Ա	Ջ	Ա	Ն				
8											Փ	Ք	Ա	Ն	Ա	Լ				
9	Ա										Ի	Ր	Ի	Ս		Ա	Ն	Ա	Շ	
10	Մ	Ա	Ր	Դ	Ա	Մ	Օ	Տ		Ս	Տ	Գ	Ի	Ի	Տ					
11	Ա	Ս	Ր		Դ	Ի	Տ	Ա	Կ		Ն	Ա								
12	Ր	Տ		Ն	Ա	Ռ		Լ	Ո	Ր	Ա	Մ	Ա	Ր	Ք					
13	Ա	Ղ	Թ	Ա	Մ	Ա	Ն	Ր		Ն	Ա	Թ								
14	Ն	Ա		Ն	Ո	Յ	Ե	Մ	Ի		Հ	Ռ	Ա	Կ						
15	Ո	Ի		Ա	Ր	Ք	Ա	Յ		Մ	Ա	Ք	Թ	Ի						
16	Յ	Ո	Փ		Դ	Ո	Ի	Ն	Ջ		Ք	Ա	Մ	Ա	Կ					
17	Ր	Ո	Տ	Ի	Ն						Լ	Ի	Թ	Ա	Ն	Ի				
18	Բ	Խ	Խ		Ը						Է	Մ	Ի	Ր	Պ					
19	Ա	Ս	Ա	Ր	Ո	Ն					Շ		Պ	Ո	Ր	Ա				
20	Շ	Ի	Ն	Ի	Ջ						Ք	Ա	Ք	Ա						



Հ.Մ.Ը.Մ. ԵՐՈՒՄԱԿԱՆԲՍ